Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Բոլոնիայի գործընթաց. ուսանողակենտրոն համակա՞րգ

Հայաստանի Հանրապետության երեք բուհերի օրինակով

Մխիթար Գաբրիելյան

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության կրթաթոշակներ նախաձեռնության ծրագրի շրջանակներում դրամաշնորհ N 17843 : Հոդվածում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Բովանդակություն

Գործադիր ամփոփում 3
Ներածություն 4
Նպատակը, խնդիրները և մեթոդաբանությունը 6
Մեթոդաբանություն և ընտրանք 7
Վերափոխումների հիմնական ուղղությունները 9
Բոլոնիայի գործընթաց. ընկալումներ, պատկերացումներ, գնահատականներ 10
Խորհրդային իներցիայի պահպանում, նախկին համակարգի առավելությունների շեշտադրում. 11
Սինթեզ. ևվ... եվ... տարբերակով 14
Բարեփոխումների անհրաժեշտությունը ընդունող խումբ. 16
Ուսանողական միջավայր. իրավիճակ, ընկալումներ, գնահատականներ 17
Բոլոնիայի գործընթացի մասին գիտելիքներ և տեղեկատվություն 19
Կրթական համակարգը որպես համակարգային հիմնախնդիրների բաղկացուցիչ 23
Ինչու ուսանողը պետք է շահագրգռված լինի Բոլոնիայի գործընթացի մասին տեղեկատվություն ունենալու հարցում. 27
Եզրակացություններ և առաջարկություններ 29

Գործադիր ամփոփում

Բոլոնիայի գործընթացը, որին միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը (Բերգեն, 2005) բարձրագույն կրթության համակարգի զարգացման նպատակները, խնդիրները, հիմնական ուղղությունները, ինչպես նաև դրանք լուծելու գործողությունները բնութագրող, ընդհանրական համակարգ է: Նրա հիմնական նպատակներից մեկը Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) ապահովելն է: ՛՛ԵԲԿՏ՛՛-ն պատկերացվում է որպես մի բաց տարածք, որում ուսանողներին, շրջանավարտներին և բարձրագույն կրթության աշխատողներին հնարավորություն է ընձեռվում անարգել շարժունության և հավասարապես մատչելի բարձորակ բարձրագույն կրթության համար: Այսպիսի բաց տարածքի անկյունաքարերն են բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչումը, թափանցիկությունը և եվրոպական համագործակցությունը որակի ապահովման ասպարեզում՛՛:[1] Այս ձևակերպումը, ըստ էության, նախանշում է նաև այն հիմնական գործողությունները, որոնք պետք է իրականացվեն ՀՀ բարձրագույն կրթության համակարգում: Դրանց մի մասն արդեն իրականացված է[2]:

Սակայն, չնայած արձանագրված առաջընթացին, բարձրագույն կրթության մակարդակում դեռևս բավականին շատ են խնդիրները ինչպես բովանդակային, այնպես էլ կազմակերպչական տեսանկյուններից: Մասնավորապես, դեռևս ավարտված չէ գործընթացի կարևորագույն գաղափարներից մեկի՝ ուսանողակենտրոն համակարգի ձևավորումը: Նախկին մեթոդների ու գործիքների կիրառումը, Բոլոնիայի գործընթացի նպատակների ու խնդիրների որոշ դեպքերում ոչ բավարար իմացությունը, ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների կողմից գործընթացի ոչ բավարար կարևորումը բերում են նրան, որ վերափոխումների մի մասը շարունակում է գոյություն ունենալ ՛՛թղթի վրա՛՛ կամ ՛՛փոխակերպվում է՛՛ դասախոսների ու ուսանողների ցանկություններին համապատասխան:

Թվարկված և բազմաթիվ այլ խնդիրների պատճառները և օբյեկտիվ են և սուբյեկտիվ: Մի կողմից, ավելի ու ավելի ակնհայտ է դառնում, որ առանց համակարգային հիմնախնդիրների հաղթահարման հնարավոր չէ ապահովել կրթական համակարգի մրցունակությունը ինչպես ՀՀ-ում ինքնաիրացման հնարավորությունների ապահովման, այնպես էլ եվրոպական միջավայր ինտեգրվելու տեսանկյունից: Մյուս կողմից, հատկապես կրթական գործընթացի կազմակերպման հարթությունում ակնհայտ է դառնում մարդկային գործոնի կարևորությունը: Բազմաթիվ են դեպքերը, երբ առկա են բավարար տեղեկատվություն, հնարավորություններ, սակայն ուսանողներն ու դասախոսները չեն օգտվում կամ չեն ցանկանում օգտվել դրանցից ընդամենը ցանկության բացակայության պատճառով: Այսինքն, օբյեկտիվ գործոններին ավելանում են սուբյեկտիվներն ու պայմանավորում հիմնախնդիրների գոյությունը հատկապես կրթական գործընթացի կազմակերպման մակարդակում, երբ օրենքների, որոշումների, նորմատիվային փաստաթղթերի, լայն առումով՝ հայեցակարգային խնդիրները լուծումը

[1]Բոլոնիայի գործընթացը Հայաստանում. Ուղեցույց, Եր., 2008, էջ 7. http://edu.am/DownloadFile/1202arm-Bologna_Process_in_Armenia-_Guide.pdf: /վերջին այցելությունը 31.05.2013/:

[2]ՀՀ-ում ներդրված է ուսուցման կրեդիտային համակարգը բակալավրիատի և մագիստրատուրայի մակարդակում, կրեդիտային համակարգով ուսուցում կազմակերպվում է նաև ասպիրանտուրայում:

կախած է մնում կրթության կազմակերպիչներից ու մենեջերներից, դասախոսներից ու ուսանողներից:

Ներածություն

Կրթական բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում վերջին երկու տասնամյակում իրականացվող վերափոխումների բաղկացուցիչ մասն են: Դրանք ընդգրկում են կրթական համակարգի բոլոր մակարդակները՝ հանրակրթություն, բարձրագույն և ետբուհական կրթություն, նպատակ ունենալով ապահովել կրթական համակարգի որակական, բովանդակային փոփոխությունները, ինտեգրացիան միջազգային, հատկապես եվրոպական կրթական տարածություն և գիտելիքի և ծառայությունների մատուցման որակական փոփոխությունները կրթական համակարգի բոլոր օղակներում: Մեծ հաշվով, դրանք միտված են լուծելու կրթական համակարգի ու կրթական գործընթացի ժողովրդավարացման խնդիրները, ապահովելու դերակատարների ավելի ակտիվ մասնակցությունը կրթական գործընթացի կազմակերպման բոլոր հարթություններում:

Բոլոնիայի գործընթացը, որը կանոնակարգում է բարձրագույն կրթական տարածության վերափոխումները, նույնպես միտված է հիմնականում այս խնդիրների լուծմանը: Բարձրագույն կրթության կառուցվածքային բարեփոխումները ՀՀ առանձին բուհերում մեկնարկել են դեռևս 90-ականներին, բայց համակարգային բնույթ են ստացել արդեն ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքի ընդունումից հետո (2004), որն ամրագրեց Բոլոնիայի հիմնարար սկզբունքների իրականացման, մասնավորապես, բարձրագույն կրթության երկաստիճան համակարգի, բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի որակավորումների և ECTS-ի ներմուծման պահանջը համակարգային մակարդակով: Շրջադարձային փուլանիշ էր հատկապես 2005-ը, երբ Հայաստանը պաշտոնապես միացավ Բոլոնիայի գործընթացին, իսկ բարեփոխումների հետագա ընթացքն այնուհետև ուղղորդվեց ԿԳՆ կողմից մշակված միջոցառումների պլանով: Հայաստանում վերջին հնգամյակը նշանավորվեց Բոլոնիայի գործընթացի զգալի առաջընթացով և համակարգային մակարդակով Բոլոնիայի գործիքակազմի ներմուծմամբ: Ավելի վաղ, Լիսաբոնյան ճանաչման կոնվենցիային Հայաստանի միանալուց հետո (2004) հիմնվեց Ակադեմիական ճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը (2005), ապա կատարվեց համակարգային անցում բարձրագույն կրթության երկաստիճան կառուցվածքին (2006) և կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական ECTS համակարգին (2007), «Էրազմուս-Մունդուս» ծրագրի միջոցով սկզբնավորվեց ուսանողական շարժունությունը Հայաստան-Եվրոպա ուղղությամբ (2007): Ստեղծվեց մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (2008), իսկ ասպիրանտուրայում համակարգային մասշտաբով ներմուծվեց հետազոտողի կրթական ծրագիրը՝ Բոլոնիայի երրորդ աստիճանը (2009):

Այնուամենայնիվ, չնայած որոշակի ձեռքբերումներին, իրականացված բարեփոխումները հիմնականում վերաբերվել են բարձրագույն կրթության կառուցվածքային բնութագրերին և, ընդհանուր առմամբ, դեռևս չեն անդրադարձել

կրթական ծրագրերի բովանդակությանը և որակին: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են Բոլոնիայի բարեփոխումների արդյունավետ իրականացմանը մեր բուհական համակարգում:

Իրենց նշանակությամբ առանձնանում են, մասնավորապես,

- բուհական բարեփոխումներին պետական ֆինանսական աջակցության փաստացի բացակայությունը,
- բարեփոխումների հիմնական շահառուների՝ ուսանողների և դասախոսների, աննշան ներգրավվածությունն ու իներտությունը,
- շատ տեղերում բարեփոխումների մակերեսային իրականացումը և ձևական բնույթը, վերից վար կառավարումը և բյուրոկրատական գործընթացի վերածվելու վտանգը,
- Բոլոնիայի բարեփոխումների երկարաժամկետ ազգային ռազմավարության բացակայությունը և գործող օրենսդրության ոչ լիարժեք համապատասխանությունը վերջերս պաշտոնապես մեկնարկած ԵԲԿՏ-ի չափանիշներին,
- ինչպես նաև բուհ-հասարակություն, բուհ-աշխատաշուկա թույլ կապերը և գիտամանկավարժական ներուժի շարունակվող էրոզիան ու ծերացումը[3]:

Մեջբերումը վերաբերում է կրթական ոլորտում առկա համակարգային հիմնախնդիրներին, որոնք կվերլուծվեն ստորև և կներկայացվեն առաջարկություններ առկա խնդիրների հաղթահարման ուղղությամբ:

Իրականում, ինչպես ցույց են տալիս հրապարակի վրա եղած ուսումնասիրությունները ու փորձագիտական գնահատականները, կրթական համակարգի խնդիրներն Հայաստանում առկա համակարգային խնդիրների ընդամենը մեկ բաղադրիչն են:

[3] Մանրամասն տես՝ Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում /հեղինակային խումբ՝ Ա. Բուդաղյան-ղեկավար, Յու. Սարգսյան-փորձագետ, Ն. Մանասյան – վերլուծաբան, Մ. Սանթուրջյան - խմբագիր/.- Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, Եր., 2012:

Նպատակը, խնդիրները և մեթոդաբանությունը

Իրականացված ուսումնասիրության հիմնական *նպատակը կրթական համակարգի բարեփոխումների կարևոր բաղադրիչներից մեկի՝ կրթական գործընթացին որպես սուբյեկտ, ակտիվ դերակատար ուսանողների մասնակցության ներկա վիճակի և ներուժի հետազոտությունն է՝ բարեփոխումների գնահատման, դրանց նպատակների և արդյունքների իմացության, սեփական իրավունքների, պարտականությունների ու հնարավորությունների մասին տեղեկացվածության խնդիրների դիտարկմամբ:*

Հետազոտության գիտական կանխավարկածներից մեկը հանգում էր այն դիտարկմանը, որ ուսանողական և դասախոսական կազմի մի մասի համար բարեփոխումների բովանդակության ու նշանակության ընկալումը մեխանիկական է և հանգում է կրեդիտային համակարգի մասին նվազագույն գիտելիքներ ունենալուն: Պատահական չէ, որ հիմնականում ընկալման մեխանիկական, ոչ ստեղծագործական հարթությունում է նաև կրթական գործընթացի այնպիսի կարևորագույն բաղադրիչը, ինչպիսի ինքնուրույն աշխատանքն է: Մինչդեռ, այն կարևորված և սահմանված է կրթական քաղաքականության տարբեր փաստաթղթերում և միաժամանակ, կարևորվում է նաև բուհական փաստաթղթերում:[4]

Հետազոտության նպատակին համապատասխան, ձևակերպվել են ***հետևյալ խնդիրները.***

---

[4] ՝՝Ուսուցման նոր համակարգին անցնելը բխում է Բոլոնիայի գործընթացի պահանջներից և նպատակ ունի աստիճանական անցում կատարելու ուսման կազմակերպման ***ուսանողամետ համակարգին, որտեղ ուսման գործընթացի կենտրոնում ուսանողն է՝ իր անհատական կրթական կարիքներով, նախասիրություններով և ունակություններով, ապահովելով ուսումնառության ճկուն ձևերի և անհատական կրթական հետագծերի իրականացման լայն հնարավորություն (այստեղ և այսու ընդծումն իմն է-Մ. Գ.):*** Կրեդիտային համակարգի ներդրմամբ զգալիորեն բարելավվել է ձեզ առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքը և աշխատածավալը, հիմնավորված կերպով թեթևացվել լսարանային բեռնվածությունը, կրճատվել դասավանդվող առարկաների քանակը՝ իրատեսական նախադրյալներ ստեղծելով ձեր ինքնուրույն ուսումնական աշխատանքի հնարավորությունները մեծացնելու, ուսումնական ծրագրերը լավագույնս դյուրացնելու և դրանցով սահմանված կրթական արդյունքները ձեռք բերելու համար: Համալսարանում ներդրված կրեդիտային համակարգն ամբողջությամբ համատեղելի է Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) հետ, ինչը նորաստեղծ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ձեր ակադեմիական շարժունության (ուսանողական փոխանակումներ, ուսումնառության ժամանակահատվածներ օտարերկրյա բուհերում, կրթության շարունակում ավելի բարձր աստիճանում և այլն) ընդլայնման և որակավորումների ճանաչման դյուրացման գրավականն է: Իսկ դա կընդլայնի ձեր ***ապագա կարիերայի և մասնագիտական աշխատուժի գլոբալ շուկայում աշխատանք գտնելու հնարավորությունները:*** Կրեդիտային համակարգի ներդրումը համալսարանում մեկնարկած լայնամասշտաբ կրթական բարեփոխումների սկիզբն է միայն, բարեփոխումներ, որոնք պայմանավորված են ոչ միայն Բոլոնիայի գործընթացի պահանջների ձևական կատարմամբ, ***այլև համալսարանում ծրագրային բարձր չափորոշիչների պահպանման և ուսման որակի բարձրացման նպատակադրությամբ, ինչի հիմնական չափանիշը մեր շրջանավարտների մասնագիտական աշխատանքով ապահովվածությունն է՝՝:*** Մեջբերումը ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանի խոսքից է, որը ներառված է ուսանողների համար նախատեսված ուղեցույցների բոլոր ֆակուլտետների տեքստերում: Տես օրինակ՝ Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ՝՝Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրով սովորող ուսանողների համար (առկա ուսուցում)՝՝, Եր., 2013, էջ 5-6: http://www.ysu.am/files/Informatics_and_Applied_Mathematics_2013-1378282493-.pdf

Ա. Հետազոտել ուսանողների տեղեկացվածությունը Բոլոնիայի գործընթացի նպատակների, խնդիրների, արդյունքների մասին; տեղեկատվության ստացման եղանակներն ու աղբյուրները;

Բ. Նոր կրթական համակարգի և վերջինիս հիմնական բաղադրիչների՝ դասախոսների և ուսանողների գնահատականները: Հետազոտությունում ուշադրություն է դարձվել նաև գրականությամբ ապահովվածության, տեխնիկական հագեցվածության և այլ հարցերին;

Գ. ուսումնասիրել գործընթացին որպես սուբյեկտ մասնակցելու հետ կապված հարցերը, ուսանողների ու դասախոսների գնահատականներն ու ինքնագնահատականներն այս տեսանկյունից;

Դ. Որպես կարևոր բաղադրիչ դիտարկել ուսանողների ինքնուրույն աշխատանքի ձևերն ու մեխանիզմները, արժեքային կողմնորոշումներն ու գնահատականները:

Հետազոտությունը ցույց տվեց, որ առանձնացված խնդիրները, ինչպես և ենթադրվում էր հետազոտական առաջարկում, փոխկապակցված են ու փոխպայմանավորված, իսկ լուծումները, որոնք կարող են մշակվել դրանց լուծման համար, պետք է լինեն համակարգային:

Մեթոդաբանություն և ընտրանք

Հետազոտության մեթոդաբանությունն ընտրելիս ու ընտրանքը կառուցելիս հաշվի է առնվել մի քանի իրողություն: Կար այն բանի գիտակցումը, որ նմանատիպ հետազոտություններում, որպես կանոն, նախապատվությունը տրվում է հետազոտության քանակական մեթոդներին, հատկապես եթե դրվում է ներկայացուցչական տվյալներ ապահովելու և հանրապետության բոլոր բուհերի վրա կոնկրետ հետազոտության արդյունքները տարածելու խնդիրը: Սակայն, հաշվի առնելով հարցադրումների որոշ առանձնահատկությունները, սույն հետազոտությունում նախապատվությունը տրվել է հետազոտության որակական մեթոդներին և գործիքներին: Նման մոտեցումը, բնականաբար, սահմանափակել է հանրապետության բոլոր բուհ-երի վրա հետազոտության արդյունքները տարածելու հնարավորությունները: Ավելին, որոշ դեպքերում դրանք տարածելի չեն նաև մեկ կոնկրետ բուհ-ի վրա: Այդ պատճառով էլ շարադրանքում խուսափել ենք ընդհանրացումներից կամ այդպիսիք կատարել միայն այն դեպքում, երբ հրապարակի վրա եղած տարբեր ուսումնասիրությունների ու վերլուծությունների հետ համեմատությունը ընձեռել է նման հնարավորություններ: Մնացած դեպքերում, որպես կանոն, դիտարկումները ընդհանրացվել են կամ ֆակուլտետի կամ բուհ-ի մակարդակներում:

Կարծում ենք, որ նման մոտեցումը, սակայն, ամենևին չի սահմանափակել մեր՝ հետազոտական ազատությունն ու կիրառական տեսանկյունից կոնկրետ արդյունքներ ապահովելու հնարավորությունները: Սա ապացուցվեց նաև հետազոտությամբ: Մեր կարծիքով, խնդիրը նրանում է, որ չնայած տարբեր բուհերում առկա տարբերություններին ու առանձնահատկություններին, խնդիրների մի մասը, այնուամենայնիվ, ընդհանուր է կրթական համակարգի համար ընդհանրապես: Կենտրոնացված քննությունները, չնչին բացառություններով, ուսանողական դաշտը ‘’քարտեզագրում’’ են այնպես, որ բոլոր բուհերն ու ֆակուլտետները համալրվում են

մոտավորապես նույն գիտելիքն ու կարողությունները, հետևաբար նաև կրթական գործընթացի հանդեպ նույն վերաբերմունքն ունեցող ուսանողներով[5]:

Հետազոտությունն անցկացվել է երկու հիմնական ուղղությամբ: Ուսումնասիրվել են Բոլոնիայի գործընթացին վերաբերող փաստաթղթերը. օրենքներ, կառավարության որոշումներ, հաշվետվություններ, այլ փաստաթղթեր[6], բուհ-ական փաստաթղթերը՝ կանոնադրություններ, կանոնակարգեր, ուղեցույցներ, ձեռնարկներ, այլ փաստաթղթեր:[7]

Հետազոտության հիմնական ուղղությունը եղել է որակական հետազոտությունը, հետևյալ գործիքների օգտագործմամբ. ֆոկուս-խմբային հարցումներ, փորձագիտական հարցումներ և անհատական խորացված հարցազրույցներ:

Հետազոտությունն անցկացվել է հանրապետության երեք բուհ-ում՝ Երևանի պետական համալսարան, Գավառի պետական համալսարան և Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ: ԵՊՀ ընտրությունը պայմանավորված է ա. ուսանողների մեծ թվաքանակով, մատուցվող կրթական ծառայությունների բազմազանությամբ, գ. Բոլոնիայի գործընթացին առնչվող վերափոխումների խորությամբ և ակտիվությամբ, իսկ ԳՊՀ-ն և ՎՊՄԻ-ն ընտրվել են որպես մարզային հաստատություններ, որոնցից ԳՊՀ-ն մատուցում է կրթական բազմոլորտ ծառայություններ, իսկ ՎՊՄԻ-ն արդեն տասնամյակներ շարունակ ոչ միայն Լոռու մարզի, այլև հանրապետության մանկավարժական կադրեր պատրաստող հիմնական հաստատություններից է: Նման ընտրանքը հնարավորություն տվեց դիտարկել Բոլոնիայի գործընթացի աշխարհագրությունը նույնպես, հասկանալու

---

[5] Այսպես կոչված ՛՛էլիտար կամ պրեստիժային՛՛ ֆակուլտետները ընտրանքում չեն ներառվել: Երևանի պետական համալսարանում, օրինակ, երկու՝ իրավագիտության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետներում չկան անվճար տեղեր: Սրա հետ կապված նույնիսկ դատական գործընթացներ են եղել, սակայն արդյունքում իրավիճակը չի փոխվել: Ինչ վերաբերում է համաչափ ՛՛քարտեզագրմանը՛՛, ապա նման հնարավորություն տալիս է միանգամից մի քանի մասնագիտություն ընտրելու հնարավորությունը: Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ դիմած ուսանողը քննությունների արդյունքում կարող է հայտնվել պատմության կամ աստվածաբանության ֆակուլտետներում և այսպես շարունակ: Այլ խնդիր է, որ նման մոտեցումը որոշ դեպքերում ազդում է ուսանողների վրա: ՛՛Ես այս ֆակուլտետ չեմ դիմել: Դիմել եմ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, սակայն երրորդ հայտով հայտնվեցի այստեղ: Երրորդ կուրսում նույնիսկ ուզում էին թողնել համալսարանն ու դուրս գալ, սակայն ծնողներս չհամաձայնվեցին: Սակայն մագիստրատուրան այստեղ չեմ շարունակելու հաստատ. կամ գնալու եմ միջազգային հարաբերություններ կամ այլ բուհ՛՛: ***Անհատական խորացված հարցազրույց, պատմության ֆակուլտետ, ուսանողուհի, 4-րդ կուրս*** կամ ՛՛Էս տարի ավարտում եմ 4-րդ կուրսը: Բայց մեր ֆակուլտետում մագիստրատուրան հաստատ չեմ շարունակելու: Գնալու եմ տնտեսագիտական համալսարան: Հայրս խանութ ունի, հիմա էնտեղ բզբզում եմ, ավելի լավ է գնամ տնտեսագիտություն սովորեմ, որ հետո կամ հարկային մտնեմ, կամ խանութի գործերով զբաղվեմ՛՛ ***Անհատական խորացված հարցազրույց, արվեստաբանության բաժին, ուսանող, 4-րդ կուրս:***

[6] Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում /զեկույց/; ՛՛Բոլոնիայի գործընթացը Հայաստանում՛՛. Ուղեցույց; Բոլոնյան գործընթացը Հայաստանում /տեղեկանք/; Կրեդիտային համակարգի ներդրումը ՀՀ-ում /տեղեկանք/ http://edu.am/index.php?id=-5215&topMenu=17&menu1=-1&menu2=17&arch=0

[7] ԵՊՀ կայքի՝ կրթական և այլ փաստաթղթերի բաժինների նյութեր՝ http://www.ysu.am/education/; http://documentation.ysu.am/; Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի կայքի՝ կրթական և այլ փաստաթղթերի բաժինների նյութեր՝ http://www.vspi.am/index.php?id=12&lang=1; Գավառի պետական համալսարանի կայքի՝ կրթական և այլ փաստաթղթերի բաժիններ՝ http://www.gsu.am/?go=menu21:

համար, թե ինչպես են մարզային բուհ-երը կարողանում հարմարվել նոր իրավիճակին ու իրականացնել անհրաժեշտ վերափոխումներ:

Վերափոխումների հիմնական ուղղությունները

Բոլոնիայի գործընթացին միանալուց հետո բարձրագույն կրթության համակարգի վերափոխումները ընթացել են երեք հիմնական ուղղությամբ.

Ա. Օրենսդրական բազայի համապատասխանեցում եվրոպական կրթական տարածությունում գործող օրենքներին ու նորմատիվային փաստաթղթերին, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերին; կրթական գործընթացի կազմակերպումը սպասարկող նորմատիվային բազայի ստեղծում, որը, իր հերթին, նպատակ ունի կանոնակարգել գործողությունները կոնկրետ ոլորտներում,

Բ. Բարձրագույն կրթական հաստատություններում համապատասխան կանոնակարգային-փաստաթղթային բազայի ստեղծում՝ կանոնադրությունների, կանոնակարգերի, ուսումնամեթոդական ուղեցույցների, կրթական գործընթացը կազմակերպող այլ փաստաթղթերի ստեղծում կամ համապատասխանեցում Բոլոնիայի գործընթացի պահանջներին[8],

Գ. Պրոֆեսորադասախոսական կազմի, կրթության պատասխանատուների վերապատրաստումներ, ծանոթացում Բոլոնիայի գործընթացի պահանջներին, այն սպասարկող փաստաթղթային բազային /այս հարթությունում փաստաթղթերն ավելի մանրամասնեցված են, քանի որ կրթական գործընթացի կազմակերպումը կրեդիտային համակարգով ենթադրում է դետալների իմացություն և կիրարկում. կրեդիտների տրամադրման և հաշվարկման կարգ, տրամադրվող կրեդիտների համապատասխանություն ուսանողի կողմից կատարվող աշխատանքների ծավալներին, դասամատյանների գրանցման և վարման կարգ, ընթացիկ և ամփոփիչ քննությունների, ընթացիկ ստուգումների կազմակերպման, գնահատման՝ նոր սկզբունքներին համապատասխանող կարգեր և մեխանիզմներ, քննական տեղեկագրերի լրացում և այլն/[9]: Դետալների և հիմնական գործողությունների թվարկումը ցույց են տալիս, որ այս

---

[8] Հետազոտված երեք բուհում թվարկված խնդիրները լուծված են: Այժմ շրջանառության մեջ են կրթական գործընթացի կազմակկերպումը կանոնակարգող մի քանի տասնյակ փաստաթղթեր, որոնք հասանելի են ինչպես պրոֆեսորադասախոսական կազմի, այնպես էլ ուսանողների համար: Դրանք տեղադրված են բուհ-երի կայքերում, որոնք պարբերաբար թարմացվում են: Միաժամանակ, հասանելի են նաև դրանց թղթային տարբերակները, որոնք ուղարկվում են ֆակուլտետներ, այնուհետ տարածվում համապատասխան օղակներում:

[9] Խնդիրներն այս հարթությունում դրսևորվում են երկու ձևով: Մի կողմից, առկա է փաստաթղթային փաթեթ, որով առաջնորդվելով պրոֆեսորադասախոսական կազմը պետք է կազմակերպի բուն կրթական և գնահատման գործընթացները: Մյուս կողմից սակայն, ինչպես նշում էին նրանք անհատական հարցազրույցների ընթացքում, բավականին բարդ է լինում բոլոր պահանջները կատարելը, քանի որ կան ոչ բավարար իմացության ու այլ բնույթի խնդիրներ: Որպես օրինակ բերենք հետևյալը.- ՛՛Առանց եզրափակիչ գնահատման դասընթացներն ունեն երկու ընթացիկ ստուգում, յուրաքանչյուրին տրամադրվում է ինը միավոր: Կուրսերը բավականին մեծ են, յուրաքանչյուրում մինչև 70-80 և ավելի ուսանող: Ընթացիկ ստուգումներին հատկացվում է երկու քառասուն րոպե: Բնական է, որ այսքան ժամանակում բոլոր ուսանողներին չես կարող նորմալ քննել, քանի որ ամեն մեկին միջինը նույնիսկ մեկ

մակարդակում, ի տարբերություն առաջին երկուսի, նախ՝ աճում է դերակատարների թիվը. բուհերի պրոֆեսորադասախոսական կազմ, վարչական ապարատ և երկրորդ, ավելանում է այն գործողությունների թիվը, որոնք պետք է կատարվեն կրթական բարեփոխումների համատեքստում:

Դ. Նույն միջոցառումների կազմակերպում կրթական գործընթացի հիմնական շահառուների՝ ուսանողների համար կրթական համակարգի երեք մակարդակներում. բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա:

Այս մակարդակների առանձնացումը պատահական չէ, քանի որ, ինչպես ցույց տվեց հետազոտությունը, հաճախ այս հարթություններում իրականացված միջոցառումները չունեն նույն արդյունավետությունն ու ազդեցությունը կրթական համակարգի վրա:

Բոլոնիայի գործընթաց. ընկալումներ, պատկերացումներ, գնահատականներ

Հետազոտության հիմնական խնդիրներից մեկը Բոլոնիայի գործընթացի մասին տեղեկացվածության, ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում գոյություն ունեցող ընկալումների և գնահատումների բացահայտումն է, ինչպես նաև բուն կրթական գործընթացում և կրթության կազմակերպման համակարգում ընդհանրապես գործընթացի առանձին տարրերի կիրառման ու ամրագրման իրավիճակի ուսումնասիրությունը: Որպես հիմնական խնդիր ձևակերպվել է այն, *թե որքանով է հայաստանյան կրթական համակարգը դարձել կամ դառնում ուսանողակենտրոն:*

Խնդիրը դիտարկվել է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության միջավայրում:

Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների շրջանում անցկացված հարցումները հնարավորություն տվեցին Բոլոնիայի գործընթացի և վերջինիս արդյունքների մասին պատկերացումներն ու ընկալումները խմբավորել երեք հիմնական հարթությունում[10], ըստ հիմնական խմբերի:

րոպե բաժին չի հասնում: Եթե ժամանակին չես ավարտում ու թողնում ես հաջորդ դասին, ուսանողների մի մասը կարող է նաև բողոքել, որովհետև ընթացիկ քննությունների շրջան է ու նրանք պատրաստվում են մի քանի քննության ու ընթացիկ ստուգման: Այդ պատճառով էլ հաճախ ստիպված ենք լինում ստուգումներն ավարտել շատ արագ, բավարարվելով ընդամենը մեկ-երկու հարցով: ՝՝- ***Անհատական խորացված հարցազրույց, դասախոս, ԵՊՀ:***

[10]Հետազոտությունն իրականացվել է որակական մեթոդների կիրառմամբ, սահմանափակ ընտրանքով, հետևաբար, արդյունքները ոչ միշտ են տարածելի բոլոր բուհերի վրա: Դրանք արտացոլում են կոնկրետ բուհերում գոյություն ունեցող ընկալումներն ու պատերացումները: Հրապարակի վրա եղած այլ ուսումնասիրությունների արդյունքների հետ համադրությունն ու մասնագիտական դիտարկումների արդյունքները, սակայն, թույլ են տալիս որպես կանխավարկած առաջ քաշել այն թեզը, որ հինախնդիրների մի հիմնական մասը ընդհանրական է բոլոր բուհերի համար:

Խորհրդային իներցիայի պահպանում,

նախկին համակարգի առավելությունների շեշտադրում.

ուսումնասիրված երեք բուհում առկա է պրոֆեսորադասախոսական կազմի մի հատված, հիմնականում նախկին՝ խորհրդային համակարգում աշխատանքային փորձառություն ունեցող, որը կրթական վերափոխումները դիտարկում է առաջին հերթին խորհրդային կրթական համակարգի հետ համեմատության դաշտում և, որպես կանոն, նախապատվությունը տալիս խորհրդային համակարգին: Այս հարթությունում, ըստ էության, գործ ունենք կրթական համակարգի ու կրթական գործընթացի կազմակերպման մասին պատկերացումների գրեթե առանց փոփոխությունների, կամ, ընդամենը մասնակի փոփոխություններով վերարտադրության հետ: Հարցումների ընթացքում արձանագրված միջինացված ձևակերպումը հետևյալն էր.-<Խորհրդային համակարգն ավելի լավն էր, քանի որ փոխանցում էր խորքային գիտելիքներ, ամբողջական էր ու համակարգված, կանոնակարգված էին ուսանող-դասախոս հարաբերությունները, համակարգն ավելի հասկանալի էր և դասախոսների և ուսանողների համար>: Բուհ-երի պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքի և ընդհանրապես տարիքային ցուցանիշների վերլուծությունները ցույց են տալիս, որ այս մտայնությունը ունի նաև ՛՛վիճակագրական հիմնավորումներ՛՛[11]:

Սա <դասախոսակենտրոն> համակարգի դրսևորում է, երբ դասախոսն ունի գիտելիքի փոխանցման ձևն ընտրելու բավարար ինքնուրույնություն ու ազատություն և որպես հիմնական գործիք կիրառվում է դասախոսության դասական մոդելը. դասախոսը մտնում է լսարան, թելադրում օրվա նյութը, տալիս հանձնարարություններ, որոնց կատարման ընթացքը ստուգվում է սեմինար-պարապմունքների ընթացքում, իսկ գիտելիքի ստուգման հիմնական գործողությունը բանավոր քննությունն է:

---

[11] Այսպես ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը, ԵՊՀ 2011-2012 ուսումնական տարիների գործունեության մասին զեկուցում, անդրադառնալով պրոֆեսորադասախոսական համակազմի տարիքային խնդիրներին, նշել է.-՛՛Շարունակվել է ԵՊՀ դասախոսական կազմի երիտասարդացման գործընթացը, մասնավորապես, բարձր տարիքի դասախոսների ուսումնական բեռնվածության նվազեցման և դասավանդման գործընթացում երիտասարդ դասախոսների ներգրավման միջոցով: Հաշվետու տարում դասախոսական կազմը համալրվել է 30 նոր դասախոսներով, որոնցից 7-ը՝ ԵՊՀ ասպիրանտուրայից: Հիմնական դասախոսական կազմում մինչև 35 տարեկան դասախոսների թիվը կազմել է 272, 35-65 տարեկաններինը՝758, իսկ 65-ից բարձր՝236՛՛.- Մանրամասն տես՝ Երևանի պետական համալսարանի գործունեությունը 2011-2012ուս. Տարում, ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանի զեկույցը: http://documentation.ysu.am/wp-content/themes/easel/uploads/EPH_rektori_hashvetvutyun-2012.pdf, էջ 18-19: Վանաձորի Հովի. Թումանյանին անվան պետական մանկավարժական ինստիտուտում, ըստ ռեկտորի հաշվետվության, պատկերն այսպիսին է.-՛՛Ինստիտուտի հիմնական աշխատակազմում աշխատում են 14 դոկտոր, գիտությունների 103 թեկնածու և արվեստի, ֆիզիկական դաստիարակության ամբիոնների 16 դոցենտներ (վերջիններս գիտական աստիճան) չունեն: Այսպիսով՝ գիտական աստիճան և կոչում ունի հիմնական աշխատակազմի 70.5%-ը, ընդհանուր աշխատակազմի 50.3%-ը: Սրանք բավականին լավ ցուցանիշներ են այսօրվա համար, սակայն վտանգ են պարունակում վաղվա համար. հիմնական աշխատակազմի շուրջ 60-ի տարիքն անցնում է 50-ից, ընդ որում՝ գիտական աստիճան և կոչում ունի նրանց 57.8%-ը: Հրավիրված դասախոսների մեջ ավելի մեծ է մինչև 50 տարեկանների տեսակարար կշիռը, սակայն այստեղ փոքր է գիտական աստիճան և կոչուն ունեցողների թիվը. 69 դասախոսից գիտական աստիճան ունեն 8-ը: Մանրամասն տես՝ ՎՊՄԻ 2011թ. գործունեության հաշվետվություն, http://www.vspi.am/karg/+%202011-Hashvetvutjun-2007.pdf, էջ 32:

Հետազոտության ընթացքում ակնհայտ դարձավ, որ չնայած վերջին տարիներին արձանագրված տեղաշարժերին, այնուամենայնիվ, դասական մոդելը ոչ միայն պահպանվում է, այլ շարունակում է մնալ հիմնականը որոշ բուհերում և ֆակուլտետներում: Այսպես օրինակ, ԵՊՀ պատմության ֆակուլտետում դասախոսների մի մասը շարունակում է նախապատվությունը տալ դասախոսությանը:

Դասախոսները, ընդունելով հանդերձ այս գործիքի սահմանափակությունը, ունեն իրենց փաստարկներն ու հիմնավորումները: Դրանցից հիմնականը վերաբերում է կուրսերում ուսանողների մեծ թվին. պատմության ֆակուլտետի պատմության բաժնում կուրսերի միջին թվաքանակը 70-90 ուսանող է/, սեմինար խմբերը, բացի լեզուների ուսուցման և համակարգչային խմբերից, առավելագույնը 2 կամ 3: Մեծ կուրսերում և խմբերում, ըստ դասախոսների հիմնավորումների, բավականին բարդ է ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառումը: Սահմանափակ լսարանային ժամերի պայմաններում դասախոսները նախապատվությունը տալիս են դասախոսության դասական ֆորմատին այն պատճառով, որպեսզի հասցնեն մատուցել ծրագրի ամբողջ ծավալը: Հաջորդ փաստարկը, որ բերվել է այս խմբի ներկայացուցիչների կողմից, ուսանողների ինքնուրույն աշխատանքի ցածր մակարդակն է, նույնիսկ այն բուհերում, օրինակ, ՎՊՄԻ-ում, որտեղ ինքնուրույն աշխատանքին հատկացված են հատուկ ժամեր, որոնք արտացոլված են դասախոսի բեռնվածությունում: Ժամանակակից մոտեցումներն արտացոլող գրականությունը բազմաթիվ մասնագիտությունների գծով օտար լեզուներով է՝ ռուսերեն կամ անգլերեն, որոշ դեպքերում՝ մատչելի միայն ինտերնետային տիրույթում: Ուսանողների մի հիմնական մասը երեք բուհում էլ ունի և ռուսերենի և անգլերենի իմացության խնդիր, հետևաբար, ինքնուրույն աշխատանքը, որպես կանոն, վերածվում է ռուսերենից կամ անգլերենից անհաջող թարգմանությունների:

Այս խմբի ներկայացուցիչների հիմնական մասը Բոլոնիայի գործընթացի և կրթական համակարգի վերափոխումների բացասական արդյունքներ է համարում.

- կրթական գործընթացի կազմակերպման բարդացումը. ***ընթացիկ քննություններ, ստուգումներ, հանրագումարային քննություններ, մասնակցության համար միավորների հատկացում, կրեդիտային համակարգի ներդրում,*** որը շատ դեպքերում հասկանալի չէ դասախոսների համար,
- վարչարարության խստացումը. փաստաթղթերի թվի աճ,
- դրական գնահատականի նվազագույն շեմի հաղթահարման հեշտ հնարավորություններ:

Հարցազրույցները, ինչպես նաև կրթական համակարգի նորմատիվային փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս խմբի մոտ արտահայտված է մի կողմից <խորհրդային կարոտախտը>, մյուս կողմից՝ որոշակի անպատրաստությունը բարեփոխումները ընկալելու և դրանց ակտիվ մասնակից դառնալու առումով:

Պատճառների շարքում պետք է նշել նաև տեղեկատվության պակասը: Գրեթե բոլոր հարցազրույցներում դասախոսները նշել են, որ իրենք մասամբ են տեղյակ իրականացվող վերափոխումներին խորքային, բովանդակային տեսանկյունից, ընդամենը գիտեն, որ հրատարակվել և հրատարակվում են ուղեցույցներ,

կանոնակարգեր, նորմատիվային փաստաթղթեր, սակայն դրանց մանրամասն ծանոթ չեն:

Այս խմբի դասախոսների հիմնական մասը բավարարվում է գնահատման կարգում կատարված փոփոխությունները և քննական տեղեկագրերի լրացման պահանջները <յուրացնելով>, չնայած նշվում էր, որ խնդիրներ կան նույնիսկ տեղեկագրերի լրացման հետ կապված: Երևանի պետական համալսարանում այս դեպքում որպես <օգնական> հանդես են գալիս ամբիոնների լաբորանտները, դեկանատի աշխատակազմը, որոշ դեպքերում նաև կրտսեր գործընկերները: Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում և Գավառի պետական համալսարանում բացի նշվածներից, կան նաև ինստիտուցիոնալ կառույցներ, հատկապես այն դասընթացների մասով, որոնց քննությունները կազմակերպվում են թեստերի միջոցով:

Հարցազրույցների ընթացքում այս խմբի դասախոսները նշում էին, որ տարիների ընթացքում դիմադրությունը որոշակիորեն մեղմվել է. քանի որ ուղղակի ստիպված են ընդունել այս համակարգն ու կազմակերպվել նոր պայմաններում:

Հետազոտությունը թույլ տվեց բացահայտել նաև, որ չնայած դրական տեղաշարժերին, այս խումբը շարունակում է մնալ ամենապահպանողականը կրթական գործընթացում նորույթների, դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառման տեսանկյունից, որպես կանոն, բավարարվելով դասախոսություն-հանձնարարված գրականություն-սեմինար պարապմունքներ-բանավոր քննություն ձևաչափով:

Նման ընկալումները և պատկերացումները ունեն նաև <տարիքային> հիմնավորումներ. այս խմբի դասախոսների մի մասը կենսաթոշակային տարիքում է կամ այդ տարիքի շեմին, հետևաբար չունի բավարար ազդակներ՝ ակտիվություն ցուցաբերելու, դասավանդման մեթոդաբանությունը փոխելու առումով:

Հաջորդ խնդիրը, որը բնորոշ է ոչ միայն այս, այլ մնացած բոլոր խմբերի համար, Բոլոնիայի գործընթացի մասին տեղեկացվածության սահմանափակությունն է:

Շրջանառվող հիմնական հասկացությունը կրեդիտային համակարգն է, այն դեպքում, երբ կրեդիտային համակարգի ներմուծումը ընդամենը մեկ քայլն է կամ մեկ բաղկացուցիչը: Մնացյալ բաղկացուցիչներ մասին տեղեկատվությունը կամ խիստ սահմանափակ է կամ ընդհանրապես բացակայում է:

Այս դեպքում խնդիրն արդեն տեղեկատվության մատչելիության հարթությունից տեղափոխվում է սուբյեկտիվ, անձնային ընկալումների հարթություն, քանի որ երեք բուհերի կայքերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ցանկության դեպքում կարելի է ստանալ անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը Բոլոնիայի գործընթացի այլ բաղադրիչների մասին ևս:

Հետազոտական հիմնական հարցադրման՝ *ուսանողակենտրոնության* տեսանկյունից խնդիրը դիտարկելիս կարելի է արձանագրել, որ այս խումբը սահմանափակ ցանկություններ, որոշ դեպքերում՝ նաև հնարավորություններ ունի ուսանողակենտրոն համակարգ ձևավորելու գործընթացի ակտիվ մասնակից դառնալու առումով:

Սինթեզ. եվ... եվ... տարբերակով

Այս հարթությունում ներկայացված են պրոֆեսորադասախոսական կազմի բոլոր տարիքային խմբերը. երիտասարդներ, միջին և ավագ տարիքային խմբերի դասախոսներ:

Հակադրությունը Բոլոնիայի գործընթացին հիմնականում վերաբերում է խորհրդային կրթական համակարգի առավելությունները նշելուն:

Սակայն, Բոլոնիայի գործընթացի ընձեռած հնարավորությունների և առավելությունների ավելի լավ իմացությունը, ծանոթությունը կրթական գործընթացի կազմակերպման սկզբունքներին, որոշ դեպքերում՝ մասնակցությունը վերապատրաստումներին ինչպես բուհի ներսում, այնպես էլ դրանից դուրս, այս խմբի համար հստակ են դարձնում բովանդակային փոփոխությունների անհրաժեշտությունը, քանի որ Հայաստանը պարտավորություններ է ստանձնել միջազգային պայմանագրերի շրջանակում:

Քննադատությունը, որ գրանցվել է հարցազրույցների ընթացքում, վերաբերում է ոչ թե բուն գործընթացին և վերափոխումներին, այլ դրանց ընթացքին:

Հիմնական խնդիրները, որ առանձնացվել են, հետևյալներն են.

Ա. *Պրոֆեսորադասախոսական կազմը դեռևս բավարար չափով պատրաստ չէր և չէ բովանդակային փոփոխություններին:* Խնդիրը լուծելու համար, որպես հիմնական տարբերակ նշվել է դասախոսների պարտադիր վերապատրաստումը Բոլոնիայի գործընթացի շրջանակում: Ուսումնասիրված երեք բուհում մասնակի վերապատրաստումներ արվել են, սակայն վերապատրաստումները պետք է դառնան ավելի ամբողջական ու նպատակային: Այսինքն, պետք է տրվեն տեղեկություններ ոչ միայն կրեդիտային համակարգի, այլ Բոլոնիայի գործընթացի բոլոր բաղադրիչների մասին:

Երեք բուհն էլ նախաձեռնել են դասախոսների պարտադիր վերապատրաստումների գործընթաց, որի ընթացքում ԵՊՀ-ում, օրինակ, դասախոսները պետք է կուտակեն որոշակի քանակությամբ կրեդիտներ ինչպես ընդհանուր մասնագիտական՝ մանկավարժություն և դասավանդման ժամանակակից մեթոդներ, հոգեբանություն, համակարգչային գրագիտություն, ներկայացումներ պատրաստելու իմացություններ և այլն, անգլերենի տարբեր մակարդակներ և այլն դասընթացներից: Սակայն, Բոլոնիայի գործընթացի համակողմանի ներկայացման խնդիրները դեռևս բավարար չափով ներառված չեն վերապատրաստումների դասընթացում:

Հաջորդ խնդիրը, որը նշվել է դասախոսների հետ հարցազրույցների ու քննարկումների ընթացքում, դասախոսական կազմի երիտասարդացման խնդիրն է: Վերջին տարիներին երեք բուհում աշխատանքի են անցել բազմաթիվ շրջանավարտներ: Այսպես, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտորի՝ 2012թ. աշխատանքների մասին հաշվետվությունում նշվում է, որ աշխատանքի է հրավիրվել բուհ-ի յոթ շրջանավարտ, ինչը նման բուհի համար փոքր թիվ չէ: Գավառի և Երևանի պետական համալսարաններում նույնպես երիտասարդացումը տեղի է ունենում հիմնական շրջանավարտների հաշվին, սակայն, կադրերի ներգրավման հիմնական խոչընդոտներից մեկը ցածր աշխատավարձերն են: Երիտասարդ դասախոսների հետ հարցազրույցների ժամանակ նշվել է, որ բուհերի աշխատավարձը լուծում է նվազագույն խնդիրներ և առանց այլ բուհերում դասավանդելու կամ դրամաշորհային ծրագրերի

հնարավոր չէ գոյատևել[12]: Իսկ այլ աշխատանքները, իրենց հերթին, արդեն ազդում են դասավանդման որակի և գիտական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունների վրա:

Բ. *Կրթական նյութեր, դասագրքեր, մեթոդական, ուսումնամեթոդական ձեռնարկներ.* ուսումնասիրված երեք բուհում այս խնդիրը նշվել է որպես հիմնականներից մեկը, քանի որ առանձին դասընթացներ դասավանդվում են հնացած, ժամանակի տեսական ու մեթոդաբանական հարցադրումներին չհամապատասխանող դասագրքերով ու ուղեցույցներով:

Որպես խնդիր առանձնացվել է նաև հայերենով դասագրքերի պակասը կամ սահմանափակ լինելը: Սա կարևոր է այն պատճառով, որ ուսանողների միջավայրում ցածր հիմքերի վրա է օտար լեզուների իմացությունը: Եվ ԵՊՀ-ում և ՎՊՄՀ-ում և ԳՊՀ-ում հումանիտար ֆակուլտետների դասախոսները նշում էին, որ որոշ դեպքերում ուսանողները փոխում են կուրսային կամ ավարտական աշխատանքները միայն այն պատճառով, որ հանձնարարված գրականությունը հիմնականում ռուսերենով է կամ անգլերենով: Լուծումը, որ առաջարկվում է այս խնդրի հետ կապված, հանգում է զուգահեռ գործողությունների անհրաժեշտությանը. ստեղծվեն/թարգմանվեն դասագրքեր և բուհերում բարձր հիմքերի վրա դրվի լեզուների ուսուցումը: Միայն դասագրքերի ստեղծումը խնդիրը չի լուծի, քանի որ լեզուների կամ գոնե մեկ օտար լեզվի իմացությունը պարտադիր է ինքնահիրացվելու և հաջողության հասնելու տեսանկյունից:

Գ. Երեք բուհում էլ նշվել է, որ վերջին տարիներին լուրջ քայլեր են արվել գրադարանային ֆոնդի համալրման ուղղությամբ: ԵՊՀ գրադարանն, օրինակ, հնարավորություններով և համալրման տեմպերով գրեթե չի զիջում Ազգային և ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարաններին: Սակայն դեռևս լուրջ խնդիր է բուհերի/առանձին ֆակուլտետների տեխնիկական հագեցվածությունը: Մասնավորապես, ուսումնասիրված ֆակուլտետներում դեռևս բավականին քիչ են ժամանակի պահանջներին համապատասխան կահավորված լսարանները, սահմանափակ են դասերի ժամանակ տեխնիկայի օգտագործման հնարավորությունները:

Լուրջ խնդիր է նաև դասերից հետո լսարանների օգտագործումը, քանի որ ԵՊՀ-ում, օրինակ, որպես կանոն բոլոր ֆակուլտետներում դասերը երկհերթ են:

Հեռակա ուսուցման համակարգում այս հիմնախնդիրներն ավելի սրված են, քանի որ ուսանողները բուհում լինում են լավագույն դեպքում երեք-չորս ամիս մեկ ուսումնական տարում, իսկ ռեսուրսների պակասը, գրականության բացակայությունը սահմանափակում են ինքնուրույն աշխատանքի հնարավորությունները: Հեռակա ուսուցման համակարգում մեծ է գյուղաբնակ ուսանողների տեսակարար կշիռը, հետևաբար, առանց ռեսուրսների մատչելիության, բովանդակային փոփոխությունների հնարավորությունները սահմանափակ են:

Ի տարբերություն առաջին խմբի, երկրորդ խմբի մոտեցումներն ավելի իրատեսական են, հիմնված Բոլոնիայի գործընթացների առանձին մանրամասների

---

[12] ՝՝Աշխատավարձերի ցածր լինելը ստիպում է , որ դասավանդենք մի քանի տեղում կամ լրացուցիչ պարապմունքներ անենք բուհ ընդունվողների հետ: Ես, օրինակ դասավանդում եմ ևս մեկ տեղում ու էդ ամենից հետո էլ հոգնած հասնում եմ տուն, որ մի քիչ հանգստանամ ու ընդունելության համար պարապեմ: Այլ կերպ չեմ կարողանա հոգալ իմ ընտանիքի կարիքները՝՝.- ***Անհատական խորացված հարցազրույց, դասախոս, ԵՊՀ:***

իմացության վրա, և, բացի զուտ քննադատությունից, պարունակում են նաև կոնկրետ առաջարկություններ ու լուծումներ: Այս խումբն ավելի բաց է փոփոխությունների հանդեպ, քանի որ կարողանում է կամ փորձում է օգտագործել գործընթացի ընձեռած հնարավորությունները:

Որպես դրական օրինակ կարելի է նշել ԳՊՀ-ն, որը, երևանյան բուհ-երի համեմատ ունենալով սահմանափակ հնարավորություններ, որոշ դեպքերում նաև՝ սահմանափակ մրցունակություն, կարողանում է տարբեր միջազգային ֆոնդերի օգնությամբ վերապատրաստումների հնարավորություններ ստեղծել դասախոսների և ուսանողների համար: Մասնավորապես, Տեմպուս ծրագրի տարբեր ենթածրագրերի շրջանակում, առաջիկայում եվրոպական տարբեր բուհ-երում վերապատրաստվելու է շուրջ երկու տասնյակ դասախոս և ուսանող: Նույնը կարելի է ասել նաև Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի մասին, որտեղ դարձյալ և ուսանողները և դասախոսները օգտվում են մասնավորապես Տեմպուս ծրագրի ընձեռած հնարավորություններից: Այս առումով առաջատարը Երևանի պետական համալսարանն է, որի և ուսանողները և դասախոսները ավելի ակտիվ են փոխանակման տարբեր ծրագրերին մասնակցության տեսանկյունից:

Բարեփոխումների անհրաժեշտությունը ընդունող խումբ.

Ըստ ուսումնասիրության արդյունքների, այս խումբն ամենափոքրն է երեք բուհում և ներառում է հիմնականում երիտասարդ, մասամբ նաև՝ միջին սերնդի դասախոսներին:

Բարեփոխումների կարևորությունն ընդունող այս խումբը կրթություն է ստացել հայաստանյան բուհերում, սակայն, որպես կանոն, ուսումը շարունակել կամ վերապատրաստվել է եվրոպական և ամերիկյան բուհերում, գիտական կենտրոններում, հետևաբար՝ ավելի հստակ պատկերացումներ ունի գիտակրթական համակարգի զարգացումների, կրթության ու գիտության ոլորտում մրցունակության սկզբունքների ու հնարավորությունների, և նոր համակարգի առավելությունների մասին:

Այս խումբը, ըստ հետազոտության արդյունքների, ավելի բաց է, կիրառում է ուսուցման ինտերակտիվ մեթոդներ, հետևողական է հանձնարարվող գրականությունից օգտվելու հարցում, հանձնարարում է նաև օտարալեզու գրականություն:

Այս խմբի ներկայացուցիչների հետ անցկացված հարցազրույցները արձանագրում են մեկ այլ իրողություն, որը կարելի է անվանել <անբավարարվածություն>: Բովանդակային տեսանկյունից խմբի խնդիրները վերաբերում են ուսանողների պատրաստվածությանը: Հիմնական փաստարկը, որ բերվում է երեք բուհում, այն է, որ հեշտացվել է բուհեր ընդունվելու գործընթացը, սակայն, ի տարբերություն եվրոպական ու ամերիկյան համալսարանների, նույնքան հեշտ է նաև ավարտելը:

Սա նշանակում է ուսանողների մի մասի կողմից միայն <մեխանիկական> գործողությունների կատարում նվազագույն դրական գնահատական ապահովելու նպատակով. մասնակցություն դասախոսություններին, ընթացիկ քննությունների ժամանակ հիմնականում նյութը սերտելու արդյունքում միավորների ապահովում և

հանրագումարային քննության ժամանակ մեկ-երկու միավոր ստանալով դրական շեմի ապահովում:

Դասախոսների մոտավոր գնահատումներով ուսանողական այս կոնտինգենտը գրեթե բոլոր բուհերում և ֆակուլտետներում գերազանցում է հիսուն տոկոսը, ինչը սահմանափակում է ուսուցման նոր մեթոդների կիրառման, գիտելիքի փոխանցման ժամանակակից գործիքների օգտագործման հնարավորությունները:

Հաջորդ խնդիրը, որը կարևոր են համարել բոլոր խմբերը, աշխատանքի համարժեք վարձատրության խնդիրն է: Երեք բուհում դասախոսներն աշխատավարձը համարում են ցածր նորմալ կենսամակարդակ ապահովելու և միաժամանակ միայն գիտամանկավարժական գործունեությամբ զբաղվելու համար:

Ուսանողական միջավայր. իրավիճակ, ընկալումներ, գնահատականներ

Ուսանողական միջավայրի միջինացված պատկերը ըստ անցկացված հետազոտության արդյունքների ներկայացնելուց առաջ դիտարկենք այն խնդիրները, որոնք ըստ փորձագետների, կրթական համակարգի դերակատարների, մասամբ՝ նաև ուսանողների, բնութագրական են ուսանողության համար ընդհանրապես:

Հիմնական հարցադրումները այս դեպքում ևս վերաբերում են այն խնդրին, թե արդյոք Բոլոնիայի գործընթացը ուսանողակենտրոն համակարգ է կամ դառնում է այդպիսին, որոնք են գործընթացի հաջողությանը խոչընդոտող խնդիրները պետական-կառավարման, կրթական գործընթացի կազմակերպման, հիմնական դերակատարների՝ կրթական գործընթացի պատասխանատուներ, դասախոսներ և ուսանոնղներ, հարթություններում:

Ա. Բուհ-եր ընդունվելու հնարավորություններ, կրթական մակարդակ և պատրաստվածություն. Դասախոսական կազմի, ինչպես նաև ուսանողության որոշ մասի դիտարկումներն այս հարցի հետ կապված հիմնականում երկու հարթությունում են. ա. բուհեր ընդունվելու համեմատաբար հեշտ հնարավորություններ նախկինի համեմատությամբ: Ուսումնասիրված ֆակուլտետներում նշվել է, որ հատկապես վճարովի ուսուցման համակարգում տեղերի աճը պետք է դիտարկվի շուկայական հարաբերություններին անցման համատեքստում, երբ կրթության կազմակերպիչներն առաջնորդվում են <պահանջարկ-առաջարկ սկզբունքով> և ավելացնում ուսանողների թիվը: Սակայն նման գործընթացը միանշանակ որպես դրական չի գնահատվում, քանի որ ուսանողների թվի աճը, որպես կանոն, ուղեկցվում է նաև բավարար պատրաստություն չունեցող ուսանողների տեսակարար կշռի աճով: Այսինքն, գրեթե բոլոր բուհերում ձևավորվում է այնպիսի վիճակ, երբ հաճախ ընդունվում են ուսանողներ, որոնց գիտելիքներն ու կարողությունները բավարար չեն բուհում սովորելու համար: Որպես հիմնական պատճառ, ի թիվս այլոց, նշվել են նաև <սերտման>, թեստերն անգիր անելու ճանապարհով բուհ ընդունվելու հեշտ

հնարավորությունները: Ինչպես նշեց դասախոսներից մեկը հարցազրույցի ժամանակ, ՝՝տեստերն անգիր անելը բերում է նրան, որ հատկապես առաջին կուրսում շատ ուսանողներ ուղղակի պատրաստ չեն ուսումնական գործընթաց ներգրավվելու՝՝: Բերվել է նաև հետևյալ զավեշտական օրինակը, երբ պատմական իրադարձության թվի մասին հարցին տրվում է հետևյալ պատասխանը.- <թիվը չեմ հիշում, բայց պատասխանը երկրորդն է>[13]: Այս օրինակը ցույց է տալիս, թե ինչպես են բուհ ընդունվելու նախապատրաստական փուլում կիրառվող սկզբունքները մեխանիկական գործողությունների վերաճում արդեն ուսումնառության ընթացքում: Ակնհայտ է, որ օրինակները ուղղակի կապ չունեն Բոլոնիայի գործընթացի հետ, քանի որ կրկնուսույցների ինստիտուտը Հայաստանում գոյություն ուներ և խորհրդային շրջանում և մինչև Բոլոնիայի գործընթացին միանալը:

Երրորդ խնդիրը, որն առանձնացվել է այս հարթությունում, վերաբերում է ***հեռակա ուսուցմանը:*** Մի կողմից, և դասախոսների և ուսանողների կողմից առանձնացվել է դրականը, քանի որ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն է տրվում այն խավերին, ովքեր չունեն առկա ուսուցման ավելի բարձր վարձավճարները մուծելու հնարավորություն, հեռավոր կամ սահմանամերձ բնակավայրերից են և չեն կարող տևական ժամանակ մնալ այն քաղաքում, որտեղ բուհն է: Մյուս կողմից, սակայն, շեշտվում են բացասական իրողությունները, մասնավորապես, երբ բուհ են ընդունվում գրեթե անպատրաստ, հաճախ նույնիսկ բավարար գրագիտություն չունեցող ուսանողներ: ՝՝Հեռակա ուսուցման համակարգի կուրսերից մեկում երկու գրավոր ընթացիկ քննություն եմ անցկացրել: Գրավոր աշխատանքների բովանդակությանը չեմ անդրադառնում: Աշխատանքների առնվազն 80%-ում առկա են ուղղագրական կոպիտ սխալներ, շատ հաճախ ուղղակի հնարավոր չէ հասկանալ ուսանողի հայերենը: Կուրսի կեսից ավելին անբավարար է գնահատվել: Մոտավորապես 30% կազմել են բացակայող ուսանողները: Նույն պատկերն է եղել նաև բանավոր քննությունների ժամանակ. Կամ եկել են անպատրաստ, կան նորից չեն ներկայացել: Ես չեմ հասկանում, թե բուհ-ին ինչ պետք են նման ուսանողները, կամ ընդհանրապես, հասարակությանը ինչ պետք են նման ուսանողները՝՝.-**Անհատական խորացված հարցազրույց, դասախոս, ԵՊՀ:**

Հաջորդ խնդիրը վերաբերում է գիտելիքի փոխանցման գործընթացին. հեռակա ուսուցման համակարգում ժամաքանակներն ավելի քիչ են (առկա ուսուցման հաար նախատեսված ժամանաքանակի 3/8-ի չափով), և, ուսանողը, որպես կանոն, ստանում է բարձրագույն կրթության դիպլոմ ունենալով ընդամենը տարրական, մակերեսային գիտելիքներ կոնկրետ դասընթացներից: Դիտարկումները ցույց են տալիս, որ հեռակա

[13] Հատկապես գրավոր ու հանրագումարային քննությունների ընթացքի կարելի է բերել բազմաթիվ նման օրինակներ. Ազգագրություն դասընթացի քննություններից մեկի ժամանակ ուսանողներից մեկը, օրինակ, համառորեն պնդում էր, որ Ավստրիան գտնվում է Աֆիկայում, մեկ ուրիշը բավարար վստահությամբ հայտարարում, որ քաղաքագիտությունը գիտություն է քաղաքների մասին:

ուսուցման համակարգ ընդունվում են ուսանողներ, ովքեր կամ արդեն դասավանդում են դպրոցում կամ պատրաստվում են դասավանդել բուհն ավարտելուց հետո: Այս դեպքում արդեն ձևավորվում է շղթա, երբ ոչ բավարար գիտելիքներ ունեցողները մտնում են կրթական համակարգ, պատրաստում ոչ բավարար գիտելիքներ ունեցողներ, ովքեր, իրենց հերթին, դարձյալ մտնում են կրթական համակարգ: Ակնհայտ է, որ այս խնդրով է մասամբ բացատրվում նաև դպրոցական կրթության համակարգում առկա հիմնախնդիրների մի մասը[14]:

Բոլոնիայի գործընթացի մասին գիտելիքներ և տեղեկատվություն

Հետազոտված երեք բուհում էլ Բոլոնիայի գործընթացի և կրթական համակարգի մասին տեղեկատվությունը կարելի է համարել բավարար, ընդ որում, այն մատուցվում է մի քանի հարթությունում.

Ա. Տպագիր և էլեկտրոնային տեղեկատվություն: Առաջին կուրսեցիները, որպես կանոն, սեպտեմբեր ամսին, արդեն առաջին հանդիպումների ժամանակ ստանում են տեղեկատվություն կրթական գործընթացի մասին կամ էլեկտրոնային կրիչներով կամ թղթային տարբերակով, կամ երկուսը միասին: Ուսանողներին փոխանցվող տեղեկատվությունը վերաբերում է կրթական գործընթացի կազմակերպման սկզբունքներին, գնահատման սկզբունքներին ու չափանիշներին, կրեդիտների հաշվարկման կարգին ու մեխանիզմներին, ըստ կիսամյակների և ուսումնական տարիների կրեդիտների թվաքանակին, գնահատման ձևերին ու եղանակներին, կրթական ծրագրում ներառված դասընթացների համառոտ բովանդակությանը, հիմնական թեմաներին և այլն[15]:

Գավառի պետական համալսարանում, ըստ կրթության կազմակերպման պատասխանատուների, ուսանողներն ունեն նաև դասախոսությունների էլեկտրոնային տարբերակին, հարցաշարին ծանոթանալու հնարավորություն համալսարանի կայքէջից, որի համար նրանց յուրաքանչյուրը ստանում է համապատասխան ծածկագիր ու գաղտնաբառ: Հաշվի առնելով այն, որ ուսանողների մի հիմնական մասը Գեղարքունիքի մարզի գյուղական համայնքներից է, համալսարանն օգնում է նաև էլեկտրոնային փոստ

---

[14]Հեռակա ուսուցման համակարգում բավականին լուրջ է նաև հաճախումների խնդիրը: Այսպես, կուրսերց մեկում, որտեղ կոնկրետ առարկայից կարդացվում էր ընդամենը վեց դասախոսություն, ուսանողների մոտավորապես հիսուն տոկոսը մասնակցությունից ուներ զրո միավոր, այսինքն գրեթե չէր հաճախել դասերի պատճառաբանելով կամ <շրջանում> բնակվելով կամ այն հանգամանքով, որ ավտոբուսները շուտ են մեկնում և դասերին մնալու դեպքում իրենք ուղղակի չեն կարողանա տուն վերադառնալ:

[15]Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի կայքում՝ http://www.vspi.am/index.php?id=34&lang=1 կա համապատասխան տեղեկատվություն կրթական ծրագրերի մասին, առավել մանրամասն՝ մագիստրատուրայի համար: ԵՊՀ կայքի համապատասխան բաժնում տեղադրված են ուսանողների համար նախատեսված ուղեցույցներ և առկա և հեռակա ուսուցման համար. մանրամասն տես՝ http://www.ysu.am/education/: Գավառի պետական համալսարանի կայքում ևս կա որոշակի անհրաժեշտ տեղեկատվություն: Մանրամասն տես՝ http://gsu.am/?go=menu21:

բացելուն և առկա ու հեռակա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողների մի մասը անհրաժեշտ կրթական նյութերը ստանում է էլեկտրոնային փոստի միջոցով:

Երեք բուհերի կայքերի ուսումնասիրությունը ցույց տվեց նաև, որ վերջիններիս տրամադրում են ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ և պարբերաբար թարմացվող տեղեկատվություն: Մասնավորապես, կայքերում տեղադրված են հիմնական կանոնակարգերը, կրթական գործընթացի կազմակերպման ներբուհական փաստաթղթերը[16]: Երևանի պետական համալսարանում ներդրվել է ևս մեկ կարևոր բաղադրիչ. ֆակուլտետների կայքէջերում ուսանողները կարող են գտնել ամբողջական տեղեկատվություն դասացուցակների, կրթական ծրագրերի, քննաշրջանի ժամանակացույցի վերաբերյալ, ֆակուլտետների կայքերում տեղադրված են նաև դասացուցակները: Այսինքն, երեք բուհերի կայքն էլ պարբերաբար թարմացվում է և ցանկության դեպքում ուսանողն ունի անհրաժեշտ նվազագույն տեղեկատվությանը առանց խոչընդոտների ծանոթանալու հնարավորություն:

Բ. ***Ֆակուլտետների ղեկավարության, կրթական համակարգի պատասխանատուների, կուրատորների կողմից փոխանցվող տեղեկատվություն:***

Հիմնական հանդիպումները, ինչպես առաջին դեպքում, կազմակերպվում են հիմնականում սեպտեմբերին և առաջին և բարձր կուրսի ուսանողների, ինչպես նաև մագիստրատուրայի ուսանողների համար:

Որպես կանոն, այս հանդիպումների ժամանակ նախնական, ընդհանուր տեղեկատվություն է տրվում կրթական գործընթացի կազմակերպման սկզբունքների, գնահատման չափանիշների, յուրաքանչյուր դասընթացի համար հատկացվող կրեդիտների, միջին որակական գնահատականի հաշվարկման կարգի և ձևավորման առանձնահատկությունների, ընթացիկ քննությունների և ստուգումների մասին:

ԵՊՀ Պատմության ֆակուլտետում, որպես կանոն, նման հանդիպումներ կազմակերպվում են բոլոր կուրսերի ուսանողների հետ, որոնց ժամանակ տրամադրվում է արդեն ավելի մանրամասն տեղեկատվություն: Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում, ինչպես նաև Գավառի պետական համալսարանում

---

[16] Եվ ԵՊՀ, և ԳՊՀ և ՎՊՄի կայքերում կա ամբողջական տեղեկատվություն բուհում ընդունված և կիրարկվող կանոնակարգերի մասին: Դրանք, որպես կանոն մի քանի տասնյակն են, բաց են ու մատչելի: Ցանկության դեպքում ուսանողը, դրանց ծանոթանալով, կարող է դառնալ Բոլոնիայի գործընթացի ակտիվ <մասնակից>: Գավառի պետական համալսարանն, օրինակ, հրատարակում է առաջին կուրսեցու ուղեցույց, 34 էջ ծավալով, որը պարունակում է ԳՊՀ ուսանողի խարտիան, Ընդհանուր տեղեկություններ ԳՊՀ մասին, Տեղեկություններ ֆակուլտետների և մասնագիտությունների, Ուսումնական գործընթացի կազմակերպման մասին ըստ հետևյալ ենթաբաժինների. Կրեդիտային համակարգի հիմնական սկզբունքները, կրեդիտային համակարգի հիմնական նորմերը, միջազգային համագործակցությունը և ծրագրերը, մատուցվող կրթական ծառայությունները, գրադարանից օգտվելու կանոնները, իրավաբանական կլինիկան, խորհուրդեր ուսանողներին, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկություններ ԳՊՀ վարչական անձնակազմի վերաբերյալ: Մոտավորապես նույն սկզբունքով տեղեկատվություն են տրամադրում նաև այլ բուհերը:

ևս այս գործընթացի պատասխանատուն հիմնականում ֆակուլտետների վարչական անձնակազմի ներկայացուցիչներն են, կուրատորները, դասավանդող դասախոսները:

Գավառի պետական համալսարանում, օրինակ, ըստ ուսումնասիրության արդյունքների, նման տեղեկատվություն փոխանցելու պարտականություն ունեն նաև դասախոսները՝ առաջին մեկ-երկու դասախոսությունների ընթացքում:

Գ. ***Վիզուալ (տեսանելի, տեղադրված) տեղեկատվություն ֆակուլտետներում.*** Երևանի պետական համալսարանում բավականին ակտիվ ու մատչելի է նաև վիզուալ տեղեկատվությունը: Մասնավորապես, ուսումնասիրված բոլոր ֆակուլտետներում կա տեղեկատվություն միջին որակական գնահատականների, ռոտացիայի արդյունքների, զեղչերի տրամադրման կարգի վերաբերյալ:

Բոլոր բուհ-երի բոլոր ֆակուլտետներում մատչելի են դասացուցակները, քննաշրջանի /ընթացիկ ստուգումներ, քննություններ, եզրափակիչ քննություններ/ ժամանակացույցը, ուսանողներին անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

Սակայն, ուսումնասիրված երեք բուհերում կամ բացակայում է կամ սահմանափակ է Բոլոնիայի գործընթացի մասին վիզուալ տեղեկատվությունը, ինչը, կարծում ենք, բավականին բարդացնում է ուսանողության և դասախոսական կազմի ընկալումներն ու պատկերացումները: Բավականին սակավ, դիպվածային է նաև փոխանակման ծրագրերի, տարբեր հետազոտական դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ վիզուալ տեղեկատվությունը:

Դրանք, լավագույն դեպքում, կարող են հանդիպել ուսանողական խորհուրդների կամ ուսանողական գիտական ընկերությունների ստենդներին, եթե այդպիսիք կան ֆակուլտետներում:

Ուսումնասիրված երեք բուհերում էլ գործում են անհրաժեշտ տեղեկատվության փոխանցման այլ մեխանիզմներ ևս: Մասնավորապես, Երևանի պետական համալսարանում հետազոտական ծրագրերի, միջազգային դրամաշնորհների, ուսանողական փոխանակման ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը, բացի համալսարանական կայքում արտացոլվելուց, Միջազգային կապերի վարչության կողմից գրությունների ձևով ուղարկվում է ֆակուլտետներ, այնուհետև ամբիոններ, որտեղից, ըստ տրամաբանության այն պետք է հասնի նաև ուսանողներին կամ դասախոսներին: Այս դեպքում, սակայն, որոշ ֆակուլտետներում ու ամբիոններում առաջանում է ընթացիկ վարչարարության խնդիր, երբ ոչ միշտ են դասախոսներն ու ուսանողները տեղեկացվում կոկրետ ծրագրերի մասին:

Այսպիսով, երեք բուհերում էլ, ըստ ուսումնասիրության արդյունքների ու կայքերի վերլուծությունների, ընթացիկ անհրաժետ տեղեկատվությունը մատչելի է և փոխանցվում է տարբեր խողովակներով:

Միայն տեղեկատվության առկայությունը, սակայն, բավարար չէ հաջողության հասնելու համար: Կրթական բարեփոխումների հաջողությունն ապահովելու համար կարևոր է տեղեկատվության արդյունավետությունը:

Ուսանողների շրջանում անցկացված ֆոկուս–խմբային հարցումներն ու անհատական խորացված հարցազրույցները հնարավորություն տվեցին արձանագրել, որ որոշ դեպքերում արդյունավետությունը բավարար չէ: Երևանի պետական համալսարանի կայքում տեղադրված, ինչպես նաև ուսանողներին էլեկտրոնային կրիչների վրա բաժանվող <Ուղեցույցները> ունեն հետևյալ ծավալը. Պատմություն ֆակուլտետ՝ ավելի քան 400 էջ, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ՝ շուրջ 200 էջ: Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում և Գավառի պետական համալսարանում տեղակատվության ծավալները համեմատաբար փոքր են. կազմելով շուրջ 40 էջ: Տեղեկատվության բովանդակությունը բավականին բարդ է հատկապես առաջին կուրսեցիների համար, քանի որ որպես կանոն նրանք չեն ընթերցում միջինը հարյուր էջ կազմող տեղեկատվությունը կրթական գործընթացի մասին:

Որպես կանոն, ուսանողները համեմատաբար ավելի լավ են ծանոթ այլ մատչելի տեղեկատվությանը իրենց իրավունքների ու պարտականությունների, բուհերում գործող խմբակների, գրադարաններից օտվելու կարգի մասին:

Հաջորդ խնդիրը վերաբերում է ***տեղեկատվության պարբերականությանը:*** Հիմնական և ըստ էության, ամենածավալուն տեղեկատվությունը երեք բուհում տրամադրվում է առաջին կուրսում: Դրանից հետո տրամադրվում է հիմնականում ընթացիկ տեղեկատվություն, կապված կոնկրետ ուսումնական տարում նախատեսված գործողությունների հետ: Մինչդեռ, Բոլոնիայի գործընթացի գործողությունների ուղղությունները շատ ավելի բազմազան ու բազմատարր են, քան միայն կրեդեիտային համակարգի ներմուծումը:

Այսպես.

1999թ. Բոլոնիայի հռչակագրով սահմանվել են

- ✓ Դյուրընթեռնելի և համադրելի աստիճանների համակարգի ընդունում,
- ✓ Հիմնականում երեք աստիճանների /բակալավրիատ, մագիստրատուրա, դոկտորանտուրա կամ ասպիրանտուրա–Մ. Գ./ վրա հիմնված համակարգի ընդունում,
- ✓ Կրեդիտների համակարգի հիմնում,
- ✓ Աջակցություն ուսանողների և գիտամանկավարժական ու վարչական կազմի շարժունությանը,
- ✓ Աջակցություն որակի ապահովման ասպարեզում եվրոպական համագործակցությանը,
- ✓ Բարձրագույն կրթության եվրոպական չափայնության խթանում:

Պրագայի 20012. Կոմյունիկեով ներմուծվել են

- ✓ Հարատև կրթության կարևորում,
- ✓ Բուհերի և ուսանողների ներգրավում,
- ✓ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի գրավչության խթանում:

Բեռլինի 2003թ. Կոմյունիկեով ավելացվել են

- ✓ Դոկտորական ծրագիրը և սիներգիան Եվրոպայի բարձրագույն կրթության տարածքի ու Եվրոպական հետազոտական տարածքի միջև:

Ըստ էության, այս տասը չափանիշների կամ սկզբունքների զուգակցումն ու փոխկապակցվածությունն է ապահովում կամ կարող է ապահովել Բոլոնիայի գործընթացի հաջողությունները նաև հայաստանյան կրթական տարածությունում և հայաստանյան կրթական տարածության անցումը ուսանողակենտրոն համակարգի:

Անցկացված հարցումները, սակայն, ցույց տվեցին, որ բավարար տեղեկատվություն ապահովված է միայն կրեդիտային համակարգի մասով, ընդ որում, խնդիր առկա է ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների միջավայրում:

Խնդիրների և դրանց պատճառների շարքում, և ուսանողները և դասախոսների հիմնական մասը առանձնացրել է այն, ինչը պայմանականորեն կարելի է անվանել <բովանդակային հարթություն>:

Կրթական համակարգը որպես համակարգային հիմնախնդիրների բաղկացուցիչ

Ցանկացած երկրում կրթական համակարգի հաջողությունները, անկախ կրթական համակարգի վճարովի կամ անվճար լինելու իրողությունից, արդյունք են պետական նպատակային, ուղղորդված քաղաքականության, որի վերջնարդյունքը որակյալ, մրցունակ գիտելիքի ապահովումն է, նման գիտելիք կրող երիտասարդության մուտքը աշխատաշուկա, արդյունքում նաև՝ կոնկրետ պետության մրցունակության աճը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մրցունակության ապահովման տեսանկյունից:

Նախկին Խորհրդային Միության, ինչպես նաև որոշ այլ երկրների քաղաքականությունն ապացուցեց, որ որակյալ կրթական համակարգ հնարավոր է ձևավորել նաև ավտորիտար համակարգերում, երբ հստակ ձևակերպվում են խնդիրներն ու նպատակները, ապահովվում է շրջանավարտների մուտքը աշխատաշուկա և ամենակարևորը, բուհերը չեն գնում թվաքանակի արհեստական ուռճացման ճանապարհով:

Հայաստանի Հանրապետությունում վերջին երկու տասնամյակի հասարակական, քաղաքական ու տնտեսական զարգացումների հակասականության մասին բավականին շատ է գրվել: Դրանցից յուրաքանչյուրն, իր հերթին, ուղղակի ազդեցություն է ունեցել կրթական համակարգի և վերջինիս առանձին բաղադրիչների վրա ընդհանրապես:

Տնտեսության անկման, գիտատար ճյուղերի աստիճանական թուլացման, արդյունաբերության առանձին ճյուղերի փաստացի անգործության պայմաններում

ձևավորվել է այնպիսի իրավիճակ, երբ բուհ-շրջանավարտ-արտադրություն կապը կամ էապես թուլացած է, կամ խզված:

Բազմաթիվ մասնագիտությունների գծով շրջանավարտները շատ դեպքերում ուղղակի չունեն աշխատանք գտնելու հնարավորություն, որովհետև բացակայում են կամ խիստ սահմանափակ են ըստ մասնագիտության աշխատատեղերը: Եթե հավելենք Հայաստանի տնտեսական անհամաչափ զարգացման իրողությունները, ֆինանսների, վարչական ռեսուրսի ու ինտելեկտուալ ներուժի գերկենտրոնացումը Երևանում, ակնհայտ է դառնում, հատկապես մարզերում առանձին մասնագիտությունների գծով աշխատատեղ գտնելու հնարավորությունը հասցված է զրոյի:

Այսպես, Վանաձորում անցկացված ուսումնասիրությունների ժամանակ բազմիցս նշվեց, որ նախկին հզոր արդյունաբերական կենտրոնում այսօր գրեթե չեն գործում արդյունաբերական ձեռնարկություններ, հետևաբար, բարձրագույն կրթություն ստացած աշխատուժը կամ պետք է ուղղորդվի այլ ոլորտ, մրցակցության մեջ մտնելով համապատասխան մասնագետների հետ, կամ, զբաղվի որպես կանոն մասնագիտական որակավորում ու հմտություններ չպահանջող, հաճախ՝ դիպվածային, չերաշխավորված ու ցածր վարձատրվող աշխատանքներով:

Գավառի պետական համալսարանում նույնպես բացահայտվեց այս իրողությունը: Եվ Գավառ քաղաքում և մարզի այլ քաղաքներում այսօր գրեթե չեն գործում մեծ թվով աշխատատեղեր ապահովող արդյունաբերական ձեռնարկություններ: Հետևաբար, առանձին մասնագիտությունների գծով պահանջարկը հասել է նվազագույնի: Այստեղ <հեղինակավոր> մասնագիտությունների շարքում են հիմնականում իրավագիտությունը/իրավաբանությունը, տնտեսագիտությունը և մանկավարժական մասնագիտությունները: Առաջին դեպքում մասնագիտության ընտրությունը ուսանողները հիմնավորում էին ավարտելուց հետո ոստիկանությունում, դատախազությունում կամ դատական համակարգում աշխատանքի անցնելու հնարավորությամբ, մանավանդ որ Գավառում են ոչ միայն քաղաքային, այլ մարզային կառույցները: Տնտեսագիտության դեպքում հեռանկարը կապվում է հարկային ծառայությունում, առանձին կառույցների ֆինանսատնտեսական բաժիններում կամ վարչություններում և հիմնականում մասնավոր սեկտորում ախատանք գտնելու հնարավորությունների հետ. բանկեր, վարկային կազմակերպություններ, աուդիտորական ընկերություններ, հաշվապահական աշխատանքներ և այլն:

Մանկավարժության ընտրությունը կապվում է արդեն ինչպես Գավառում, այնպես էլ գյուղերի դպրոցներում աշխատանք գտնելու հնարավորությունների հետ, սակայն այս դեպքում հեռանկարն ավելի մշուշոտ է, քանի որ հատկապես գյուղական դպրոցներում աշխատատեղերի թիվը սահմանափակ է:

Ուսանողների կողմից հիմնականում նույն փաստարկներն էին բերվում Վանաձորում: Երկու դեպքում էլ, սակայն, շեշտվում էր առաջին իսկ հնարավորության դեպքում Երևան տեղափոխվելու ցանկությունը:

Երևանի պետական համալսարանի ուսումնասիրված ֆակուլտետներում մասնագիտության ընտրության գրեթե նույն հիմնավորումներն էին այն տարբերությամբ, որ պատմության ֆակուլտետի մասնագիտություններում՝ պատմություն, արվեստաբանություն, մշակութաբանություն, մեծ թիվ են կազմում երկրորդ և հաջորդ հայտերով ընդունված, այսինքն, ոչ ըստ նախասիրությունների այս բաժիններ ընդունված ուսանողները: Մասնակի բացառություն է կովկասագիտություն բակալավրական ծրագիրը, քանի որ այն բացվել է ընդամենը երկու տարի առաջ, հետևաբար, առաջին հայտով ընդունվածները հույսեր են կապում ավարտելուց հետո աշխատաշուկայում տեղ գտնելու հետ: Որպես այս մասնագիտության առավելություններից մեկը ուսանողները նշել են նաև վրացերենի կամ ադրբեջաներենի պարտադիր ուսուցումն արդեն առաջին կուրսից, ինչը, նրանց ընկալմամբ, նույնպես մեկնարկային առավելություն է աշխատաշուկայում իրացվելու տեսանկյունից:

Հասարակական հարթությունում միտումներն ու զարգացումներն առավել քան հակասական են: Անցած երկու տասնամյակում հասարակական ընկալումներում էապես փոխվել են ուսման, բարձրագույն կրթության հարգն ու կարևորությունը որպես սոցիալական շարժունություն, բարեկեցիկ կյանք ու մասնագիտական առաջխաղացում ապահովող գործոններ: Հասարակական ընկալումներում, կամ գոնե դրանց մի մասում հաջողությունը կապվում է հիմնականում ուժի, փողի, ազդեցության ու իշխանության ոչ ֆորմալ մեխանիզմների հետ:

Եվ ֆոկուս-խմբային հարցումների և անհատական խորացված հարցազրույցների ընթացքում ուսանողները նշում էին, որ չնայած գիտելիքի կարևորությանն ու առաջնայնությանը, այնուամենայնիվ կարիերայի, հաջողության ու առաջընթացի կարևոր նախապայմաններից են շարունակում մնալ <ծանոթների, միջորդությունների, մաղարիչների> ինստիտուտը, որոնք ուղղակիորեն ազդում են նաև ուսման հանդեպ վերաբերմունքի վրա:

Այսինքն, որպես հիմնական միտումներից մեկը հանդես է գալիս կրթության ու գիտելիքի հանդեպ վերաբերմունքի փոփոխությունը:

Այս դեպքում արդեն բավականին բարդ բացատրելի է մեկ այլ իրողություն, որը պայմանականորեն կարելի է անվանել <դիպլոմամոլություն>: Մոտավոր գնահատումներով, ՀՀ բուհերում բակալավրահտում, մագիստրատուրայում և ասպիրանտուրայում սովորում է շուրջ 95000 ուսանող[17]: Ուսանողների թվով առաջին տեղում Երևանի պետական համալսարանն է՝ շուրջ 19000 ուսանող: Մարզային բուհերից առաջինը Գյումրու և Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտներն են: Ընդհանուր առմամբ, մարզային բուհերում սովորում է շուրջ 14000 ուսանող: Բուհերի շարքում կան մասնագիտացված բուհեր՝ Երևանի պետական կոնսերվատորիա, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ, Երևանի

[17] Աղբյուրը՝ Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում, էջ 36:

գեղարվեստի պետական ակադեմիա, որոնց ուսանողների թվաքանակը հազարի միջակայքում է:

Առաջին հայացքից դժվար է ասել, թե ուսանողների նման թվաքանակը շատ է թե քիչ Հայաստանի Հանրապետության համար: ՀՀ Բնակչության՝ մարդահամարի արդյունքներում հայտարարված թվաքանակը շուրջ 3.3 մլն է: Այս թվաքանակը համադրելով ուսանողների թվաքանակի, հետ, ստացվում է որ այսօր ուսանող է ամբողջ բնակչության շուրջ 3 տոկոսը: Բնական է, որ աշխատունակ բնակչության հաշվարկի դեպքում այս տոկոսն ավելի բարձր է:

Մարզային բուհերում /մասնաճյուղերի ուսանողների թվաքանակը ներառյալ/ նույնպես ուսանողների թվաքանակը բավականին մեծ է: Տվյալները ինքնին բավականին բարդ են վերլուծության համար: Եթե սրան հավելենք ՀՀ աղքատ բնակչության բավականին բարձր տեսակարար կշիռը, միգրացիոն գործընթացների աննախադեպ ակտիվացումը վերջին երեկու-երեք տարիներին, ակնհայտ է դառնում, որ բազմաթիվ ընտանիքներ փորձում են երեխաների համար բարձրագույն կրթության <դիպլոմ> ապահովել <ամեն, նույնիսկ զրկանքների գնալու գնով>: Մասնավորապես, երեք բուհում էլ բավականին բարդ են վարձավճարների գանձման հետ կապված խնդիրները: Երևանի պետական համալսարանում, օրինակ, նշվել է, որ հաճախ ուղղակի ստիպված են գնալ զիջումների և ուսանողներին թույլատրել մասնակցել առաջին կամ երկրորդ ընթացիկ քննություններին, ստուգումներին, կտրուկ քայլերի գնալով միայն բանավոր կամ հանրագումարային քննություններից առաջ: Ուսանողներն իրենք էլ նշել են, որ իրենց ընտանիքների համար իրապես բավականին բարդ խնդիր է ուսման վճարները մուծելը, հատկապես եթե ընտանիքն ունի երկու կամ ավելի ուսանող: Այս նպատակով հաճախ վերցվում են վարկեր, որոնք իրենց հերթին հետագայում դարձյալ խնդիր են դառնում ընտանիքների համար: Ստացվում է, որ բազմաթիվ ընտանիքներ երեխաների բարձրագույն կրթությունն ապահովում են բավականին լուրջ զրկանքների արդյունքում այն դեպքում, երբ, ինչպես նշվեց, փոխվել է կրթության հանդեպ վերաբերմունքը և այն ընկալվում է որպես կարիերայի, սոցիալական շարժունության հնարավորություններ չտվող իրողություն:

Վերլուծելով վիճակագրական տվյալներն ու հարցումների ընթացքում գրառված նյութերը, կարելի է արձանագրել, որ Հայաստանում կրթական համակարգը <անցյալի և ապագայի միջև է>: Մի կողմից դեռ վերարտադրվում են նախկին, խորհրդային ստերեոտիպերը, երբ ուսուցումն ընկալվում էր որպես տանելի կենսամակարդակ ապահովելու կարևոր նախապայման, մյուս կողմից՝ այն համարվում է <ապագայի, հեռանկարի, հնարավոր դրական փոփոխությունների> համար իրականացվող գործողություն, երբ ուսանողները <ուղղակի հույս ունեն, որ կգա ժամանակ, երբ գիտելիքն ու կրթությունը կգնահատվեն և կտան տանելի կենսամակարդակ ապահովելու հնարավորություն>: Հենց ներկայի, մարտավարական ու ռազմավարական

պլանավորման բացակայությունն է, որ ձևավորում է Բոլոնիայի գործընթացի և ընդհանրապես ուսանողակենտրոն համակարգի հանդեպ վերաբերմունքը:

Ինչու ուսանողը պետք է շահագրգռված լինի Բոլոնիայի գործընթացի մասին տեղեկատվություն ունենալու հարցում.

Հարցադրումը, առաջին հայացքից, հռետորական է: Իրականում, սակայն, հարցադրման ձևակերպված, բովանդակային պատասխանն է պայմանավորում նպատակադրումների ու գործողությունների այն համախումբը, որ պետք է գոյություն ունենա կրթական համակարգում:

Դե-յուրե այս հարցադրումների պատասխանները ձևակերպված են: Եվ կրթության ու գիտության նախարարության կայքը և հետազոտված բուհերի կայքերը տալիս են կրթական գործընթացի տեսլականն ու միաժամանակ գործողությունների այն հաջորդականությունը, որը կապահովի տեսլականին հասնելը:

Ֆորմալ առումով, Բոլոնիայի գործընթացի մասին ամբողջական տեղեկատվությանը տիրապետելը ուսանողին տալիս է մրցունակության, աշխատաշուկայում իրացվելու, ցանկության դեպքում՝ հաջորդ աստիճաններում /մագիստրատուրա, բակալավրիատ/ կամ այլ բուհերում կրթությունը շարունակելու և բազմաթիվ այլ հնարավորություններ:

Իրականում, սակայն, պատկերն այլ է:

Քանակական տվյալների բացակայության պայմաններում դժվար է ասել, թե իրականում ուսանողների որ մասն ինչ պատկերացումներ ունի Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ: Ֆոկուս-խմբային հարցումների ժամանակ, սակայն, բազմիցս շեշտվել է այն միտքը, որ <այսօր ուսանողների մեծ մասն ընդունվում է միայն դիպլոմ ստանալու համար, որ մեծ մասին չի հետաքրքրում Բոլոնիայի գործընթացը, ուսանողների մեծ մասի հիմնական խնդիրը դրական գնահատական ստանալն ու ապահովելն է ...>: Նման հարցադրումներ հնչել են նաև դասախոսների ու փորձագետների հետ հարցազրույցների ընթացքում:

Հետևաբար, ուսանողների հիմնական մասի համար կարևորը ընդամենը նվազագույն տեղեկատվություն ունենալն է, որն արտահայտվում է տվյալ կիսամյակում դասավանդվող դասընթացների ցանկին ծանոթանալով, դասացուցակն արտագրելով ու մասնակցության համար նախատեսված միավորները վաստակելու համար դասերին հաճախելով, քննությունների ժամանակացույցն իմանալով և այլն: Այս տեղեկատվությունն իրականում կապ չունի Բոլոնիայի գործընթացի հետ, այլ ապահովում է ընդամենը ընթացիկ, նվազագույն ներգրավվածություն կրթական գործընթացում: Պատկերը, ըստ հարցման արդյունքների, գրեթե նույնն է հետազոտված երեք բուհում:

Ուսանողների մի հիմնական մասը բավարար պատկերացումներ չունի նաև կրթական գործընթացի այնպիսի բաղադրիչների մասին, ինչպիսին են կրեդիտը, կրեդիտների հաշվարկի մեխանիզմները, կրեդիտի բաղադրիչներն ու ենթաբաղադրիչները և այլն: Տասնյակ են օրինակները, երբ ուսանողը ուղղակիորեն չի տարբերում կրեդիտն ու գնահատման միավորը, հայտարարելով որ <այս դասընթացից արդեն վեց կրեդիտ ունեմ, եթե երկու կրեդիտ էլ բանավոր քննության ժամանակ հավաքեմ, դրական գնահատականս ապահովված է>:

Այս խմբի մեջ բավականին քիչ են ուսանողները, որոնք գիտեն, թե մեկ կիսամյակում ու մեկ ուսումնական տարում և ուսումնառության ընթացքում քանի կրեդիտ են կուտակում, ինչպես են բուն դասընթացն ու դրա համար հատկացվող կրեդիտները կապված իրար:

Առավել խնդրահարույցը հաջորդ խնդիրն է: Հետազոտված երեք բուհում էլ դեռևս սահմանափակ է ուսուցման նոր մեթոդների, գործիքների կիրառումը: Ուսանողական միջավայրում, որպես կանոն, ուսումնական գործընթացը դեռևս շարունակում է ընկալվել հիմնականում որպես դասախոսություն թելադրելու գործընթաց:

Փորձագիտական հարցումների մասնակից դասախոսները նշել են, որ արդեն առաջին մեկ-երկու հանդիպումից հետո հնչում է հերթական ստանդարտ հարցը.- <բա դասախոսություն չեք թելադրելու>:

Նույն ընկալումներն են նաև ուսանողական միջավայրում: Հարցմանը մասնակից ուսանողների մի մասը դարձյալ ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչ համարում է բուն դասախոսությունը հատկապես բակալավրիատում: Այսինքն, ինքնուրույն աշխատանքը, որը տվյալ դեպքում պետք է հանդես գա որպես կրթական գործընթացի կարևոր, գիտելիքի բավարար մակարդակ ապահովող բաղադրիչ, ուսանողի կողմից որպես այդպիսին չի ընկալվում: Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում այս խնդրի լուծման ուշագրավ ձև է կիրառվում, երբ ինքնուրույն աշխատանքի ժամերը ներառվում են դասախոսի ուսումնական բեռնվածության մեջ և դասախոսները փորձում են բացը լրացնել այս դասաժամերին ուսանողներին հանձնարարություններ տալով: Գավառի պետական համալսարանում, որտեղ կիրառվում է գնահատման հարյուր միավորանոց սանդղակը, այս խնդիրը փորձ է արվել լուծել ինքնուրույն աշխատանքի տարբեր գործիքներ կիրառելու միջոցով: Չնայած սրան, ուսանողները նշում էին, որ որոշ դեպքերում գործում է <Copy-paste>-ի հին ու բարի սկզբունքը, երբ ռեֆերատները ոչ թե գրվում են, այլ ուղղակի ներբեռնվում տարբեր կայքերից:

Երևանի պետական համալսարանում բակալավրի մակարդակում ինքնուրույն աշխատանքի բաղադրիչը համեմատաբար բարձր է բնագիտամաթեմատիկական ֆակուլտետներում, որտեղ մասնագիտությունների առանձնահատկություններն են հանդես գալիս որպես ինքնուրույն աշխատանք պայմանավորող կարևոր գործոն:

Պատմության ֆակուլտետում, ուսուցման բակալավրական մակարդակում ինքնուրույն աշխատանքի մակարդակն ավելի ցածր է: Այսպես, ֆակուլտետում անցկացված հարցումների ժամանակ ուսանողների հիմնական մասը նշում էր, որ չի կարդում կամ շատ քիչ է կարդում կիսամյակի ընթացքում: Հիմնական լարվածությունը համընկնում է ընթացիկ քննությունների կամ ստուգումների և հանրագումարային քննությունների փուլերի հետ, երբ ուսանողները ընդամենը կարդում են այն, ինչ հանձնարարվել է. դասախոսություններ, դասագրքեր, այլ նյութեր: Քիչ են այն ուսանողները, որոնք կարդում են օտարալեզու գրականություն:

Ուսանողակենտրոն համակարգը հիմնված է ուսանող-դասախոս փոխհարաբերությունների այնպիսի սկզբունքի վրա, երբ դասախոսը դադարում է լինել սոսկ գիտելիք փոխանցող և ժամանակի ընթացքում դառնում է մտածողություն ձևավորող՝ գիտելիքի փոխանցման բաղադրիչը փոխակերպելով կամ փոխելով գիտելիքի մատուցման ձևերն ու եղանակները: Վերը բերված նյութերը ցույց տվեցին, որ և դասախոսների և ուսանողների մի հիմնական մասի համար նոր մեթոդների կիրառումն ու գիտելիքի փոխանցման գործընթացի <փոխակերպումը> կապված են բավականին լուրջ բարդությունների հետ:

Բարդությունները, հետևաբար նաև դրանց լուծման հնարավորությունները տարբեր հարթություններում են.

Եզրակացություններ և առաջարկություններ

Համակարգային հարթություն.

Համակարգային հարթությունում հիմնական խնդիրը կապվում է կրթության, գիտելիքի, կրթական գործընթացի և դրանց ընկալման անհատական / անձնային հարթությունների հետ: Ակնհայտ է, որ առանց բովանդակային, լայն առումով՝ համակարգային փոփոխությունների, կրթական համակարգը առաջիկա տարիներին չի կարող արձանագրել որակական փոփոխություններ:

Համակարգային լուծումները, որոնք պետք է ենթադրեն իշխանության և վերջինիս առանձին ինստիտուտների հանդեպ վստահության աճ, կոռուպցիայի ծավալների նվազում, արտագաղթի տեմպերի դանդաղում, ուղղակիորեն կարող են նպաստել ուսանողակենտրոն կրթական համակարգի ձևավորմանը, քանի որ նման իրավիճակում, ինչպես ցույց են տալիս նաև անցկացված հարցումների արդյունքները,

Բուհերի ղեկավարները

- իրապես կկարևորեն կրթական բարեփոխումների հաջողությունը, համոզված լինելով, որ միայն այդպես կապահովեն մրցունակությունը շուկայում,
- կփոխեն որոշ դեպքերում ակնհայտ և բարեփոխումներին խոչընդոտող կառավարման հիերարխիկ մոդելներն ու մեթոդները,

- կապահովեն ֆակուլտետների իրական ինքնուրույնությունն ու ազատությունը:

Դասախոսները

- հայտնվելով սուր մրցակցության մեջ, թեկուզ հարկադրված, կգնան գիտելիքի անընդհատ հարստացման, ուսուցման մեթոդների կատարելագործման տարբերակով,
- կկարևորեն ուսումնական ձեռնարկների, մեթոդական ուղեցույցների, դասախոսությունների տեքստերի առկայությունը,
- կկարևորեն ուսանողների ինքնուրույն աշխատանքն ու դրան աջակցելը՝ որպես նաև սեփական մասնագիտական առաջընթացի ու սոցիալական շարժունության կարևոր գործիք:

Դասախոսների դեպքում, սակայն, շարունակում է կարևոր մնալ մասնագիտական վերապատրաստումների, մասնագիտական որակների անընդհատ բարելավման խնդիրը: Երեք բուհում էլ նշվել է, որ դեռևս բավականին սահմանափակ են դասախոսներին առաջատար բուհեր վերապատրաստումների գործուղելու, կամ առանձին գիտաժողովներին մասնակցությունը ֆինանսավորելու խնդիրները: Շարունակում են սահմանափակ մնալ նաև այլ առաջատար բուհերից մասնագետներ հրավիրելու հնարավորությունները: Որպես կանոն, վերապատրաստումները, գիտաժողովներին մասնակցությունը անհատական նախաձեռնությունների արդյունք են, որոնք ենթադրում են նաև ֆինանսների փնտրտուքի բավականին բարդ ու երկարատև գործընթաց:

Ուսանողները

- կունենան երաշխիքներ, որ գիտելիքն ու որակյալ կրթությունն են ինքնահիրացման, մասնագիտական առաջընթացի ու կարիերայի հիմնական նախադրյալը,
- ըստ այդմ, կկարևորեն գիտելիք ու որակյալ կրթություն, այլ ոչ թե դիպլոմ ստանալու գործընթացը,
- հանդես կգան որպես իրապես ուսանողակնետրոն համակարգի ձևավորման նախաձեռնող ու պահանջատեր:

Բուհ-երի հարթություն

Հետազոտված երեք բուհում վերջին տարիներին բավականին կարևոր և լուրջ քայլեր են արվել կրթական վերափոխումների նորմատիվային բազայի ապահովման համար: Յուրաքանչյուր բուհում մշակվել է մի քանի տասնյակ կանոնակարգ, տպագրվում են ուղեցույցներ ուսանողների ու կրթության կազմակերպիչների համար, միաժամանակ, քայլեր են ձեռնարկվել տեղեկատվության մատչելիության ապահովման

համար. պարբերաբար թարմացվում են բուհերի կայքէջերը, Բոլոնիայի գործընթացի, կրթական բարեփոխումների մասին տեղեկատվություն պարունակում են թերթերն ու այլ պարբերականները: Բավականին ակտիվ են ուսանողական խորհուրդները, որոնք ինչպես բուհերում, այնպես էլ բուհերից դուրս կազմակերպում են Բոլոնիայի գործընթացին վերաբերող սեմինարներ, փորձագետների ներգրավմամբ, գործընթացին մասնակից դարձնելով գրեթե բոլոր ֆակուլտետների ուսանողներին:

Չնայած դրական տեղաշարժերին, այս հարթությունում առկա են բավականին լուրջ խնդիրներ.

Տեղեկատվության ապահովում

Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը սահմանափակվում է հիմնականում կրեդիտային համակարգի, գիտելիքի ստուգման ընթացակարգերի ու հիմնական գործիքների մասին տեղեկություններով, որը, մեծ հաշվով, չի արտացոլում բարեփոխումների ընդհանուր բովանդակությունը, նպատակն ու խնդիրները:

Ուսանողները, այսպիսով, ստանում են բավարար տեղեկատվություն միայն գործընթացի մեկ կամ մի քանի բաղադրիչի մասին, մինչդեռ մյուս բաղադրիչների վերաբերյալ տեղեկատվությունը դեռևս բավականին սահմանափակ է:

Ուսումնասիրությունները հնարավորություն տվեցին արձանագրել, որ այս խնդրի լուծման համար անհրաժեշտ են գործողություններ բոլոր հարթություններում. բուհի ղեկավարություն, ֆակուլտետների դեկաններ և ամբիոնների վարիչներ, մագիստրոսական ծրագրերի ղեկավարներ, կուրատորներ, դասախոսներ:

Ընդ որում, կարևոր է ոչ միայն բուհի անմիջական ղեկավարության, այլ, առաջին հերթին ֆակուլտետների հարթությունը:

- Արդյունավետ գործիք կարող է լինել առաջին կուրսեցիների համար /բակալավրիատի և մագիստրատուրայի/ Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ ներածական դասախոսությունների կազմակերպումը սեպտեմբերի առաջին շաբաթներին, ոչ միայն կրեդիտային համակարգի, այլ Բոլոնիայի գործընթացի այլ բաղադրիչների համակողմանի ներկայացմամբ:
- Մագիստրատուրայի մակարդակում այս խնդիրը լուծելն ավելի հեշտ է, քանի որ ծրագրով նախատեսված են լրացական դասընթացներ, որոնք էլ կարող են տրամադրվել կրթական բարեփոխումների վերաբերյալ դասընթացին:
- Որպես խնդրի լուծման ևս մեկ տարբերակ կարող է հանդես գալ վիզուալ տեղեկատվության աճը ֆակուլտետներում. պոստերներ, այլ նյութեր, ընդհանուր վիճակագրություն պարունակող տեղեկատվություն:
- Նախադեպերի հանրայնացման նպատակով կարող է կիրառվել նաև այն մեխանիզմը, երբ ֆակուլտետներում տեղադրվում է տեղեկատվություն

տարբեր փոխանակման ծրագրերի շրջանակում արտասահմանյան բուհերում վերապատարտված ուսանողների և կոնկրետ ծրագրերի մասին, ինչպես նաև վերջիններիս մասնակցությամբ դասախոսությունների, քննարկումների, տեղեկատվության հանրայնացման այլ միջոցառումների կազմակերպումը:

- Նույնը վերաբերում է նաև դասախոսներին, երբ տարբեր բուհերում վերապատրաստված դասախոսներն են ինչպես իրենց կոլեգաներին, այնպես էլ ուսանողներին ներկայացնում վերապատրաստումների արդյունքներն ու կրթական համակարգի այն առավելությունները, որոնք առկա են տարբեր բուհերում:
- Այս ոլորտում կարևոր է ուսանողական խորհուրդների և ուսանողական գիտական ընկերությունների դերը: Ուսանողական խորհուրդների անդամները ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար հանդիպում են ուսանողների հետ՝ իրենց առաքելությունը, գործունեության նպատակն ու խնդիրները, ուսանողների իրավունքներն ու պարտականությունները ներկայացնելու նպատակով: Այս հանդիպումները նպատակահարմար կլինի օգտագործել նաև Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն փոխանցելու համար:
- Ուսանողական գիտական ընկերությունները, որոնք բավականին ակտիվ աշխատում են երեք բուհում, իրենց հերթին կարող են նախաձեռնել ուսանողական գիտական նստաշրջանների շարք՝ նվիրված կրթական համակարգի վերափոխումներին ու Բոլոնիայի գործընթացին, կամ իրենց կազմակերպած նստաշրջաններում ներառել կրթական վերափոխումներին վերաբերող թեմատիկ բլոկներ:
- Եվս մեկ տարբերակ է ուսանողական խորհուրդների և ուսանողական գիտական ընկերությունների համատեղ ջանքերով տեղեկատվական նյութերի պատրաստումն ու տարածումը:

Դասախոսներ

- Վերապատրաստումների/որակավորման բարձրացման դասընթացներում պետք է ընդգրկվի Բոլոնիայի գործընթացի մասին ամբողջական տեղեկատվություն փոխանցող դասընթաց: Լուծումներն այս դեպքում կարող են լինել կոմբինացված. հրավիրված մասնագետների, Կրթության և գիտության նախարարության և Կրթության ազգային ինստիտուտի, կոնկրետ բուհ-ի և այլ բուհերի ներկայացուցիչների ներգրավմամբ: Նման վերապատրաստումները պետք է լինեն պարբերական, միաժամանակ, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներին պետք է փոխանցվի ընթացիկ տեղեկատվություն՝ փոփոխությունների և

նախատեսվող միջոցառումների վերաբերյալ: Իրականում բուհերում նման ընթացակարգեր գործում են, երբ տեղեկատվությունը փոխանցվում է ռեկտորատի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ-դեկանատ- ամբիոններ խողովակով: Անցկացված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հիմնական խնդիրը ամբիոն-դասախոսներ օղակում է: Տեղեկատվության փոխանցումն այս դեպքում դիպվածային է, որոշ դեպքերում՝ կախված ամբիոնների վարիչների, լաբորանտների ու դասախոսների նախաձեռնողականությունից: Թերևս նաև սա է պատճառը, որ չնայած դրական դինամիկային, շարունակում է բավականին ցածր մնալ տարբեր փոխանակման ծրագրերի դասախոսների մասնակցության մակարդակը:[18]

- Դասախոսների մի հիմնական մասի համար դեռևս շարունակում է խնդրահարույց մնալ լեզուների իմացությունը: Միջին և ավագ սերնդի դասախոսների հիմնական մասը տիրապետում է ռուսերենին, հետևաբար չունի նոր գրականությանը ծանոթանալու կամ ուսանողներին գրականության հանձնարարելու հետ կապված սահմանափակումներ: Այլ օտար լեզուների իմացության մակարդակը, սակայն, դեռևս շարունակում է մնալ բավականին ցածր, հետևաբար, սահմանափակվում են փոխանակման ծրագրերին մասնակցելու հնարավորությունները[19]: Բուհերը այս խնդրի լուծման նպատակով որակավորման բարձրացման դասընթացների պարտադիր բաղադրիչ են դարձնում օտար լեզվի ուսուցումը մի քանի մակարդակով, ինչը առաջիկա տարիներին հնարավորություն կտա ապահովել գոնե նվազագույն իմացություն[20]:

---

[18]2009-2010, 2010-201, 2011-2012 ուսումնական տարիների ընթացքում ԵՊՀ-ից ըստ աշխարհամասերի գործուղումների թիվը կազմել է համապատասխանաբար 276, 323 և 325: Գործուղումների հիմնական մասը եղել է դեպի եվրոպական երկրներ, որոշակի տոկոս են կազմել նաև Հյուսիսային Ամերիկա գործուղումները: Եթե նկատի ունենանք, որ որոշ դասախոսներ տարվա ընթացքում կարող են ունենալ մի քանի գործուղում, ակնհայտ է դառնում, որ դասախոսների շարժունությունը, հետևաբար նաև նոր տեսական, մեթոդաբանական մոտեցումների ու կրթական գործիքների կիրառման հնարավորությունները դեռևս շարունակում են մնալ սահմանափակ:

[19]Այսպես, Երևանի պետական համալսարանում օտար լեզուներին տիրապետող դասավանդողների և վարչական աշխատողների տեսակարար կշիռը կազմել է համապապատասխանաբար. դասավանդողներ՝ 12% (2009); 13% (2010), 14% (2011); վարչական աշխատողների մեջ՝ ըստ տարիների տեսակարար կշիռը կազմել է համապատասխանաբար 59, 62, 75%: Ըստ վիճակագրության, օտար լեզվի տիրապետում է յուրաքանչյուր յոթերորդ դասավանդողն այն դեպքում, երբ վարչական աշխատողների դեպքում այն անհամեմատ բարձր է: Կարծում ենք, որ նման մեծ տարբերությունը պայմանավորված է գործատուի կողմից ներկայացվող պահանջներով: Պաշտոնների տեղակալման համար մրցույթների ընթացքում դասախոսներին օտար լեզուների իմացության պահանջ չի ներկայացվում:

[20] Այս նախաձեռնությունը, չնայած կարևորությանը, նույնպես բուհերում հանդիպում է ներքին, որոշ դեպքերում չբարձրաձայնվող դիմադրության: Նույնը վերաբերում է նաև համակարգչային իմացություններին, հատկապես ներկայացումներ պատրաստելու հմտություններին: Դժգոհությունն արտահայտող հիմնական բանաձևը մոտավորապես հետևյալն է.- <էս տարիքում նստելու եմ, նոր օտար

- Հետազոտությունը հնարավորություն տվեց արձանագրել, որ չնայած վերջին տարիների դրական փոփոխություններին, դեռևս բավականին ցածր մակարդակի վրա է ուսուցման ժամանակակից, ինտերակտիվ մեթոդների կիրառումը հատկապես բակալավրի մակարդակում:
- Մագիստրատուրայում, որտեղ խմբերն ավելի փոքր են, ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառումն ավելի տարածված է: Այս դեպքում, բացի սուբյեկտիվ բնույթի գործոններից. դասախոսի կամ ուսանողի ցանկության բացակայություն, կարևոր է նաև տեխնիկական հագեցվածության խնդիրը: Բուհերում դեռևս բավարար չեն համապատասխան տեխնիկայով կահավորված լսարանները, շատ դեպքերում դասախոսներն օգտագործում են իրենց անձնական տեխնիկական միջոցները:

Ուսանողներ

Ուսանողները, ինչպես արդեն նշվեց, հանդես են գալիս որպես գործընթացի հիմնական շահառու: Այլ խնդիր է, որ նման գիտակցումը, ըստ ուսանողների շրջանում անցկացված ֆոկուս-խմբային ու անհատական խորացված հարցազրույցների արդյունքների, դեռևս բավարար չափով արտահայտված չէ և ուսանողության մի հիմնական մասի համար կարևորը ոչ այնքան գիտելիք, որքան բարձրագույն կրթության դիպլոմ ունենալն է: Նման իրավիճակը, ինչպես այլ հարթություններում, պայմանավորված է ոչ թե մեկ, այլ մի քանի գործոնով:

Կրթության մասին ընկալումների մեխանիկական վերարտադրություն. կրթության ընկալումը ՀՀ-ում դեռևս շարունակում է մնալ իներցիոն, պայմանավորված նաև խորհրդային տարիներին ձևավորված իրողություններով: Այսօր ուսանողական տարիքում է այն սերունդը, ում ծնողները ժամանակին բարձրագույն կրթություն ստանալով կարողացել են խորհրդային համակարգի պայմաններում որոշակի դիրք ու սոցիալական շարժունություն ապահովել, չնայած որ դա ԽՍՀՄ գոյության վերջին մեկ-երկու տասնամյակն էր: Անկախության առաջին տարիներին, սակայն, այս խումը միանգամից զրկվեց այն հնարավորություններից, որ կարող էր ունենալ իրավիճակի ավելի երկար պահպանվելու դեպքում: Այսինքն, տեղի ունեցավ սոցիալական դերերի ու հասարակական կարգավիճակի կտրուկ փոփոխություն և այսօր երեխաներին կրթություն ապահովելով, այս սերնդի մի մասը փորձում է ՛՛փոխհատուցել՛՛ սեփական կորուստները:

լեզու սովորեմ, ինչն իրատեսական չէ>: Խնդիրներ ունեն հատկապես այն դասախոսները, ովքեր ուսումնասիրել են գերմաներեն կամ ֆրանսերեն: Կարևոր է նաև այն դիտարկումը, որ լեզուների իմացությունը, ժամանակակից մեթոդների կիրառումը, ուսանողների հետ ակտիվ ախատանքը ըստ դասախոսների մի հիմնական մասի, ուղղակիորեն չեն ազդում աշխատավարձերի վրա: Նույն աշխատավարձը ստանում են և ժամանակակից մեթոդներով աշխատող և լսարանում տարիներ շարունակ նույն դասախոսությունները թելադրող դասախոսները:

Ուսումնասիրությունը, միաժամանակ, ցույց տվեց, որ առկա է որոշակի սեգմենտավորում ուսանողական միջավայրում: Ակնհայտ է, որ միջինացված ձևակերպումները բոլոր ուսանողներին չեն վերաբերում, որովհետև բոլոր ֆակուլտետներում կա ուսանողների խումբ, որը հստակ գիտակցում է սեփական նպատակներն ու խնդիրները և արդեն ուսանողական տարիներից է փորձում ստեղծել ապագա ինքնաիրացման հիմքերը:

Սեգմենտավորումն այս դեպքում աշխարհագրական է: Մարզերից ընդունված ուսանողների մի հիմնական մասը չունի բուհն ավարտելուց հետո հայրենի բնակավայր վերադառնալու ցանկություն այն պարզ հիմնավորմամբ, որ ՝՝Երևանում են աշխատանք գտնելու հնարավորությունները խիստ սահմանափակ, ուր մնաց գյուղում՝՝: Այս խումբը պատրաստ է Երևանում մնալ նույնիսկ ոչ ըստ մասնագիտության աշխատելու պայմանով: Հետևաբար, այս խմբի դիտարկման դեպքում հասկանալի է նաև ծնողների ՝՝ռազմավարությունը՝՝. կրթությունը ծառայեցնել որպես միջոց կամ գործիք երեխային հեռանկար չունեցող սեփական բնակավայրի հեռու պահելու համար: Ակնհայտ է, որ այս խումբը կարող է և չկարևորել գիտելիքը որպես արժեք, քանի որ ռազմավարական պլանավորումն ունի այլ ուղղություն ու այլ նպատակներ[21]: Սա մեծ հաշվով, ազդում է նաև կրթական գործընթացի վրա ընդհանրապես, քանի որ ուսանողի համար խնդիր է դառնում թեկուզ միջին գնահատականներով ավարտելն ու երևանյան միջավայրում ինքնաիրացման ինչ-որ տարբերակ գտնելը: Ասվածի հիմնավորումը կարող էր դառնալ շրջանավարտների կարիերայի մասին հրապարակային վիճակագրությունը, սակայն հետազոտությունը ցույց տվեց, որ հետազոտված բուհերում մանրամասն տեղեկատվություն չկա: Ուսումնասիրությունն ու մեր անձնական դիտարկումները, սակայն, թույլ են տալիս արձանագրել, որ շրջանավարտների մեջ ցածր տեսակարար կշիռ ունեն մասնագիտությամբ աշխատողները:

՝՝Հաջողված պատմությունների՝՝ և մոտիվացիայի բացակայություն

Անհատական խորացված հարցազրույցների ու ֆոկուս-խմբային հարցումների ընթացքում ուսանողները բազմիցս բարձրացրել են այն հարցը, որ ՝՝լավ սովորելը, գիտելիք ունենալը, միևնույն է բավարար չեն հաջողության հասնելու համար, եթե չկան ծանոթներ, միջնորդներ ու այսպես շարունակ՝՝: Մեր կողմից բերված բազմաթիվ օրինակները, երբ իրենց հասակակակիցները ինքնուրույն առանց միջամտության կարողացել են ընդունվել եվրոպական համալսարաններ, կամ մասնակցել ամառային դպրոցների, վերապատրաստումների, փոխանակման տարբեր ծրագրերի, նման մոտեցման պայմաններում որպես համոզիչ չեն ընկալվել: Այսինքն, նույնիսկ

[21] Քանակական հետազոտությունների բացակայության պայմաններում այս եզրակացությունները կարող են ընդունվել որպես հիփոթեթիկ, սակայն որակական հետազոտությունները նման դիտարկման նախնական հիմքեր տալիս են:

նախադեպերի գոյությունը վերջին հաշվով հանգում է դրանց բացակայությանը, քանի որ ուսանողների համար դրանք բավարար հիմնավորում չեն լավ սովորելու ու բարձրակարգ գիտելիք ստանալու համար: Հաջորդ, առաջին հայացքից գուցե տարօրինակ այն հիմնավորումը, որը հաջողվեց արձանագրել ուսումնասիրության ընթացքում, վերաբերում է արդեն ուսանողների ոչ բավարար ինքնուրույնությանը: Ուսանողներից մեկը նշում էր, որ ՝՝մեր փոխարեն ամեն ինչ անում են մեր ծնողները, նրանք են վճարում ուսման վարձերը, հոգում կեցության խնդիրները, այդ պատճառով էլ մենք շատ բաների լուրջ չենք վերաբերում՞՞: Սա, իր հերթին, նշանակում է նաև մոտիվացիայի բացակայություն, երբ ուսանողների մի մասը, ինչպես նշվեց վերը, դարձյալ սովորում է միայն դիպլոմ ապահովելու համար:

Կրթական գործընթացի լիբերալացում

՝՝Գիտենք, որ վճարում ենք, ուրեմն պիտի ավարտենք՞՞: Սա, թերևս, կրթական գործընթացի ՝՝լիբերալացման՞՞ հիմնական բանաձևն է: Բոլոնիայի գործընթացով ուսանողն ստացել է նվազագույն շեմն ապահովելու բավականին լուրջ հնարավորություններ, ինչը դրական է, քանի որ բացառում կամ նվազագույնի է հասցնում դասախոսի սուբյեկտիվ մոտեցման հնարավորությունները: Երևանի պետական համալսարանում, օրինակ, դա ապահովվում է մասնակցության համար տրվող 2 և յուրաքանչյուր ընթացիկ գրավոր քննության համար տրվող 4-ական միավորով, այսինքն, ուսանողն ունի մինչև բանավոր քննությունը 10 միավոր վաստակելու, ցանկության դեպքում՝ նաև բանավոր քննությանը չմասնակցելու հնարավորություն: Որպես կանոն, այս դեպքում պայքարն արդեն ավելի բարձր միավորների և վճարովի համակարգից անվճար համակարգ տեղափոխվելու համար է: Այս հնարավորությունը, սակայն, ուսանողների մի մասը դիտարկում է որպես ՝՝ուղղակի ավարտելու՞՞ բանաձև, քանի որ բոլոր բուհերում բավականին ցածր են հեռացման ցուցանիշները, որպես կանոն, ամեն ինչ չի սահմանափակվում լուծարքների սահմանված թվով, տրվում են լրացուցիչ հնարավորություններ, հետևաբար, ուսանողների միջավայրում ձևավորվում է մտայնություն, որ միևնույն է ավարտելու են, քանի որ բուհ-ին ձեռնտու չէ վճարովի համակարգում սովորող ուսանողներին հեռացնելը: Բուհ-երի այս մոտեցումը նույնպես ունի իր հիմնավորումները. Դա բուհ-երի բյուջեում ուսման վարձերի դեռևս չափազանց բարձր տեսակարար կշիռն է, հետևաբար՝ նաև կախվածությունը վարձավճարներից[22]: Այսինքն, ստացվում է յուրօրինակ փակ

[22]2011թ. 11 ամիսների փաստացի եկամուտները կազմել են 840.014 մլն դրամ, որը 2011թ. բյուջեով նախատեսվածի 96.1% տոկոսն է: Եկամուտների գերակշիռ մասը կազմող վճարովի ուսուցման ծառայությունները դեկտեմբերի 15-ի դրությամբ հավաքագրվել են 97%-ով: Մանրամասն տես՝ ՎՊՄԻ 2011թ. գործունեության հաշվետվություն, http://www.vspi.am/karg/+%202011-Hashvetvutjun-2007.pdf, էջ 69: ԵՊՀ-ում և ԳՊՀ-ում նույնպես նույն իրավիճակն է. այստեղ ևս բյուջեում ուսուցման վարձավճարները կարևոր տեղ են զբաղեցնում: Տես օրինակ՝ ՝՝Երևանի պետական համալսարան՞՞ ՊՈԱԿ-ի 2013թ.

շղթա, երբ ուսանողը գիտի, որ Բուհ-ը կախված է իր ուսման վարձերից, իսկ բուհերի ղեկավարները, հաշվի առնելով նաև սոցիալական ու այլ բնույթի խնդիրները, հաճախ ստիպված են հրաժարվել զանգվածային հեռացումներից: Այս դեպքում, որպես հիմնական լուծում պետք է դիտելի բուհ-երի պետական ֆինանսավորման ավելացումը, ինչը հնարավորություն կտա թուլացնել կախվածությունն ուսման վարձավճարներից, հետևաբար՝ գնալ նաև կտրուկ լուծումների:

Ամփոփելով արձանագրենք, որ

- Չնայած բարձրագույն կրթության համակարգում վերջին տարիներին իրականացվող բարեփոխումներին, վերջիններիս բովանդակային բաղադրիչը դեռևս շարունակում է մնալ ոչ բավարար:
- Ուսանողական և պրոֆեսորադասախոսական կազմի որոշ մասի մոտ դեռևս գերակշռում են կրթական գործընթացի մեխանիկական ընկալումները, երբ կրթական գործընթացը դիտվում է որպես դասախոսության միջոցով գիտելիք փոխանցելու և բանավոր քննության ընթացքում այն ստուգելու գործողություն: Սա իր հերթին բերում է նրան, որ ուսանողական միջավայրում նախապատվությունը տրվում է հանձնարարված նյութեը սերտելու ճանապարհով գնահատական ստանալուն, այլ ոչ թե գիտելիք, կարողություն ու հմտություններ ձեռք բերելուն:
- Կրթական գործընթացը դասախոսների և ուսանողական համակազմի մի մասը դեռևս շարունակում է դիտարկել որպես գիտելիք, տեղեկություն փոխանցելուն այլ ոչ թե մտածողություն ձևավորելու ուղղված գործընթաց: Քննադատական մտածողություն և ընդհանրապես վերլուծական կարողություններ ձևավորելու խնդիրը դեռևս շարունակում է մնալ երկրորդական կրթական գործընթացում:
- Այս իրողությունները իրենց հերթին էապես սահմանափակում են ինքնուրույն աշխատանքի ձգտումներն ու ցանկությունները ուսանողության միջավայրում:
- Մեծ հաշվով, միայն բովանդակային, համակարգային փոփոխությունները կընձեռեն արձանագրված իրողությունները հաղթահարելու և կրթության բովանդակությունը Բոլոնիայի գործընթացի նպատակներին ու խնդիրների համապատասխանեցնելու հնարավորություններ:

եկամուտների և ծախսերի նախահաշիվը: http://documentation.ysu.am/wp-content/themes/easel/uploads/BYUJE 2013.pdf